

Списокъ книгъ

Списокъ книгъ

Иде

и списку

Списку

1912 г.

**Ն Մ Ո Յ Շ Ն Ե Ր**

**ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ**

**ՀԻՆ ԵՒ ՄԻՋՆԱԴԱՐԵԱՆ**

**ԲԱՆԱՀԻՒՍՈՒԹԻՒՆՆԵՐԻՑ**

1931  
ՀԱՅԿԱՍՏԱՆԻ  
ԿՈՄՍՏԱՅՊՈԼԻՏԱՆԻ  
ԿՈՆՍՏԱՆԻՍՏԱՆԻ  
ԿՈՆՍՏԱՆԻՍՏԱՆԻ  
1931

Յ Ե Մ Ե Թ Ե Ս Մ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏ. ՊԱՏՄԱԿԱՆ

ԳՐԱԴԱՐԱՆԻ ԳՐԱԴԱՐԱՆ

ԵՐԵՎԱՆԻ ԳՐԱԴԱՐԱՆ

4039

ԳՐԱԴԱՐԱՆ  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏ. ՊԱՏՄԱԿԱՆ  
ԲԱՆԴԱՐԱՆ 21831

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ

ԲԱՆԱՀԻՍՈՒԹԻՒՆ

Ք ի շ ե ր ե ր Գ

Հուանակն անուշ, հոֆն անուշ,

Շինականի բունն անուշ.

Ծագեց լուանակ երկնուց,

Հովի փողն էր անուշ:

Հօտաղ եզներ կարածայ,

Մաճկալ պառկեր՝ քունն անուշ.

Զղզղուն քամին կը փչէ,

Ծովային հոֆն էր անուշ.

Դաշտեր ձորեր մնջեր են,

Զրեր կլկլան՝ ձէնն անուշ:

Հաւքեր թռան իրենց բուն,

Բլբլիւի տաղն էր անուշ.

Անմահական հոտ բուրբեր,

Քեաֆուր վարդի հոտն անուշ:

Կ Կ Կ

## Ե Ր Գ Կ Ա Ք Ա Լ Ո Լ

Արև դէպաւ 1) սարի վերէն,  
 Խօրօտիկ 2) խօրօտիկ,  
 Կաքաւն էլաւ իր պէօնէն 3),  
 Բարև արեց ծաղկըններէն,  
 Թռաւ եկաւ սարի ձէրէն 4).

Խօրօտիկ, խորօտիկ,  
 Ա՛յ սիրունիկ կաքաւիկ:

Երբ կաքաւու ձէն կը լսեմ  
 Երթիսն ի վեր տիւս կ'իրիշիկեմ 5).  
 Կաքաւ կուգայ կըրկըրալով  
 Տեարի վերէն շորորալով.

Ա՛յ խօրօտիկ, խօրօտիկ,  
 Ա՛յ սիրունիկ կաքաւիկ:

Քէօ պէօն հինած 6) ծաղկըններով,  
 Բըհան նարկիս նունուֆարով.  
 Քէօ տեղ լըցւած ի շաղերով 7),  
 Տիւ կըմայլիս անմահ հոտով.

Ա՛յ խօրօտիկ, խօրօտիկ,  
 Ա՛յ սիրունիկ կաքաւիկ:

1) Դիպաւ: 2) Դեղեցիկ. ն 3) Բոյն: 4) Ծայր: 5)  
 Դէպ ի վեր նայել: 6) Հիւսած: 7) Ցօղ:

## Ա Ր Օ Ր Ի Ե Ր Գ

Ձիգ տու, քաշի, այ եզը,  
 Ա՛րա, հօ, հօ, արա, հօ.  
 Լուծըդ մաշի, այ եզը.  
 Ա՛րա, հօ, հօ, արա, հօ.  
 Ասուած պահէ քու տէրը,  
 Ա՛րա, հօ, հօ, արա, հօ.  
 Մինն էլ տաշի, այ եզը:  
 Ա՛րա, հօ, հօ, արա, հօ:

Մեր գութանը օղած ա,  
 Եզանց ուսը նօթած ա,  
 Վարէ վարը, այ գութան,  
 Հազիւ խոփը զօղած ա:

Շողքըն ընկաւ ծըմակին,  
 Ասուած կը տայ մըշակին.  
 Սուր գութանը ծիր գընաց,  
 Տէր-մշակը քամակին:

Սերմէ, սերմէ, այ մըշակ,  
 Սուրբ ա, սուրբ ա քու փեշակ.  
 Մինը հազար տուր, Ա՛սուած,  
 Քեզ ձէն կը տան տէր-մըշակ:

## Ս Ի Ր Ո Յ Ե Ր Գ

Ա՛յ, հեւն, հեւն, սիրտըս,  
 Ճնճըղըկան թև ա սիրտըս.  
 Քանց պուտը կարմիր չը կայ, —  
 Բաց անեմ՝ սև ա սիրտըս:

Պարտէզ եմ՝ չափար չունիմ,  
Ի՛սկ կարիճ եմ՝ եար չունիմ.  
Գընաց ձեռնէս իմ կեանքը,—  
Ձահիլ եմ՝ խաբար չունիմ:

Ուռի ծառին բար չ'իջնի,  
Տակը քար ա, վար չ'իջնի.  
Էն Աստուածն ու երկինքը  
Սիրատէրին ճար չ'իջնի,

Ս Ի Բ Ո Յ Ե Բ Գ Ե Բ

(Վանեցոց բարբառով)

Վարդն ի պացվե Վանայ քեաղքի էկէյտտար,  
Աստուած սիրես մէկ օրօխիկի ձիկը տանր.  
Քեան նազերով, քեան խօբօտիկ, տիւ վիճրն ես:  
Աշխար գիտի, ալամ գիտի, տիւ իմն ես:

Վարդն ի պացվե առաւտման խաւ-խուսոց,  
Իմ եար բախչէն կայնե էրկու ձեռն ի ծոց-  
Վարդն ի պացվե առաւտման շաղերով,  
Իմ եար բախչէն վարգ կըքեաղի մազերով:

Վարդն ի պացվե Վարդիվէրի կիրակին,  
Քո սէրն ինզե մէջ իմ սրտի պրակին.  
Քեան նազերով, քեան խօբօտիկ, տիւ վիճրն ես,  
Աշխար գիտի, ալամ գիտի, տիւ իմն ես:

Ս Ի Բ Ո Յ Ե Բ Գ

Ծովուն հաւքըմ կէր, անունն էր արօր,  
Վըղիկ երկէն էր, սըրտիկ սեաւօր.  
Կապեմ բեչարէս, երթամ հետ ինոր,  
Էն իմ դարդ գիտի, ես էլ գեօօ ինոր:

Եկաւ հաւքըմ էլ, թըղթիկ կէր բերան,  
Առի, կարդացի իմ գըլխու Փերման.  
Արի ետր, արի, խըռով մի կենայ  
Աստըւորի մալ՝ մեզի, չի մընայ:

Ն ա գ ե ր .

Նոր է բացել բարի լուս,  
Մէկ տեղ կերթանք դար ի դուս:  
Բորիկ մի քէլէ, փուշ է,  
Սիրունիկ, պազդ անուշ է  
Էս ձորն ի վեր ձընեբակ,  
Դու նմանիս արեգակ:  
Հով կը փըչէ սարն ի վեր,  
Արտուտ կելնէ դարն ի վեր:  
Ա՛ղջի անուշիկ Նազեր,  
Խեղքս տարաւ քու մազեր:  
Երկնից կամար ունքերը,  
Ինձի վառեց քու սէրըդ:  
Մատաղ լինիմ սե աչին,  
Ես կարօտ եմ քու պաչին:

Ե Բ Գ ա ր ա գ Ի Լ Ի

Արագիլ, բարով եկիր,  
Դուն արագիլ, բարով եկիր.

Ըմե գարնան նըշան բերիր,  
Դու մեր սըրտիկ զըւարթ արիր:

Արագիլ, մեզի իջիր,  
Դուն արագիլ մեր տուն իջիր,  
Մեր խացի ծառին բունիր,  
Դու մեր սիրուն...

Արագիլ, քե գանգըտիմ,  
Հնյ արագիլ քե գանգըտիմ.  
Իմ հազար ցաւերս ասիմ  
Սրտիս ցաւեր հազար ցաւ:

Արագիլ, եր գնացիր  
Դու մեր ծառէն եր գընացիր,  
Ձուլումաթ հովեր արին,  
Ծըծղուն ծըղկներս չորցուցին:

Պըսպղուն երկինքն մըթննր,  
Էն պըսպղուն երկինք մըթներ.  
Մեր վերէն ձըննր բըրդեր,  
Ծաղկաթափ ձըմեռն հասեր:

Վարագայ սարէն բըռնած  
Էն Վարագայ սարէն բըռնած,  
Ձիւն իջնէր ըմէն ծածկեր,  
Կանաչ դաշտիկըս ցուրա աներ:

Արագիլ մեր դըրախտին ձիւնիկ  
Պատեր մեր դըրախտիկ.  
Կանաչուն մեր վարդնիս  
Ցամքեր պաղէն ը ձըմըռէն:

Պանտխտի երգեր  
1.

Ստամբէօլ քեաղաք վէր Սև ծովերաց,  
Վաթան կուրխսե վէր կարիրներաց,  
Կարիբիս մեռնեմ ուր ճամխըներաց.  
Որ չէրթէր մնէր իտև սարերաց:

Էլայ պանցր էօղէն, ինգեայ անուշ քուն,  
Կոտըաւ սըտիս սուն, էլայ էրէրուն.

Խիեալով կացի կարիբիս սիրուն,

Գիշեր ցերեկով մնացի արթուն:

Ընգեայ թաղէ թաղ ախչէմ՝ ճարիցի,  
Տվի թաբաղէմ՝ թղթիկ գնիցի.

Շողղուն մատըբերս կալամ արիցի,

Իմ սըտիս դարտեր ինե գրիցի,

Վանայ չիւմ Պօլիս մէկ օրօխկիցի,

Շատ կարիբ կուրբաթ ոտով դաոցուցի:

Արե, ջան, արե, արե եար, արե,

Վալլան կը մեռնեմ, խոցերս ի խասե:

2.

Կարիբ եմ, ձեր դուն եմ իկե,

Ձեր խուզիւ խամար դեիս ձիկ իրիշկէք.

Օրէն խացմ ջըայ կտրեցէք,

Թէ որ էլ ուզեմ, ձիգ քեարկոծեծէք:

Որ չը մեռայ, ձեր նավէղ կանեմ,

Որ մեռայ, ձիկ տարէք թաղեցէք.

Նաշիկս Առըմայ պիրէք,

Լէշիկս ինե գրեցէք:

Տարէ՛ք իմ հարոջ գոնէն ընցուցէք.

Դուռ տփէ՛ք, եար տիւս խանէ՛ք.

Ծովծւան աչքեր լացուցէ՛ք.

Չավըէս ծոցէս խանեցէ՛ք,

Ինոր ծովծւան աչքերն սրբէ՛ք:

## 3.

Լիւսին, տիւ պանցրիկ լիւսին,  
Որ կը պիւլորես մէջ տանխինդիցն.  
Շատ տուն կը մանես, շատ քեօշկ ու սարայ,  
Էրթաս կայնես իմ կարիբի զլսու վրայ:

Կարիբ, տիւ քոնես ես, թէ արթուն,  
Որ չիր կանես քէօ սէր խանես խուն,  
Ինչի մտար իմ մանկան էրուն,  
Թողիր էնպէս էրուն էրէրուն:

Ձի խաւք ծիծեռնակ պիտէր,  
Գիշ քէօ էրտիս պէտն դնի.  
Ցերեկ ել ու մուտ անի,  
Գիշերը քէօ ծոց ծվարի:

Քեօ ծոց ձիդ սալվի մնդիւկ,  
Ես էլնի մէյ կարիբ ճնճղուկ.  
Որ կոտորէր էն սալվի մնդիւկ.  
Թոնէր էն կարիբ ճնճղուկ:

Իգին ի պացվե ալաջա գեարուն,  
Սրտիցս ի էլե եւ բաւու արուն.  
Տիւ մարալ շէյրան, ես եմ քեեյ ճէյրան,  
Որ թէ մեռնեմ, տիւ ձիկ պարտական:

Ճ ա յ ե կ ն ու ա տ ր ա կ ի կ

Ճայեկն ասաց տատրակ հաւուն.  
«Ինչի կու լաս կուց կուց արուն,  
Երթայ լըցւի բարակ առուն»:

Տատրակն ասաց արօր հաւուն.  
«Գընաց գարուն, եկաւ աշուն,  
Կըտրաւ ջըրիկ աղբիւրներուն,  
Կըտրաւ խոտիկ ծաղիկներուն,

Կըտրաւ ձէնիկ կաքաներուն.  
Էնքան պիտի լամ երերուն,  
Արիւն կաթէ իմ աչքերուն,—  
Ես ինչ անեմ իմ ձագերուն»:

Ասաց. «Դու մի լա էս աշուն,  
Չէ վաղ կու գայ բարի գարուն,  
Լոյս կը բացւի վեր աշխարհուն,  
Դու կը բացւի խեղճիկներուն.  
Ես քեզ կառնեմ իմ թեքերուն,  
Թընեմ բանձրիկ վեր ծառերուն,  
Տանեմ, հանեմ վեր սարերուն,  
Բուն կը դընեմ մէջ քարերուն,  
Տուն կը շինեմ մէջ գազերուն,  
Երթիկ բանամ դէմ հով քամուն,  
Թոնիր թագեմ մէջ այրերուն,  
Ծուխ կը հանեմ հետ ամպերուն,—  
Մեր ցաւ կը տանք հարաւ քամուն:

Գընաց աշուն, եկաւ գարուն,  
Կաթէր ջըրիկ աղբիւրներուն,  
Երթար, լըցւէր բարակ առուն.  
Աղբբանց-արիւն մէջ քարերուն,  
Դեղին սուսուն վեր սարերուն,  
Փունջ մանուշակ մէջ ձորերուն.  
Կանաչ կարմիր գոյն գոյն ձագիւունք,  
Դաշտերն ամեն էրունք, թըռչունք.  
Չէնիկ կու գայ գամնիկ, մաքուն,—  
Մեր ապրելիք վեր Աստըծուն:

Ե Ր Գ Ի Ծ ա կ ա ն օ Ր Կ Ն Ե Լ Թ Ի Լ Ն

Օխնեմ օխնեմ օղօճիկես,  
Ոտնէղը վեր պօղօճիկես.

Էրթաս քեաղաք աղ առնես,

Չէթիկ մէթիկ ցաւ առնես:

Տակղ փոռն թանձր թաղիս,

Վէրէն պառկես քեառսուն ամիս:

Քեանց կալէ-մաղ կալկլես,

Քեանց ծարէ-մաղ ծարծրես:

Քեանց փոկէ-մաղ փէօկփիկես,

Կտելով ճիւր խմես՝

Ծամած խաց ուտես:

Էրկրես, էրկրես, չըփռթնես էտա ցաւից.

Չամիչ եօթ տիր կըծ անես.

Ասեղը էրկու թիվով շլկես:

Նռան խատ ամսէ ամիս,

Շաքարի կտոր չիւմ խինգ ամիս:

Վանայ ծով ձէթ էլնի,

Չայիր չիման ճրագ էլնի.

Մաչիղ մատրասէն պատրոյզ էլնի,

Գիշեր ցերեկ հա վառւի՝

Խոզիւտ թօղութեն չէլնի:

Օրհնութիւն տան և պարագայից

Օրհնեցի տունն ու անդիվորն,

Պառաւն ու խալիվորն,

Ախչիկն ու տղէն,

Խարսն ու փէսէն:

Թըքոտն ու մկնոտն,

Չավարն ու կուրկոտն,

Մաղազէն ու մառան,

Ամբարն ու հնձան:

Չէթն ու եղաման,

Սոխն, սխտոր, սխտորաման:

Տաշտն ու մաղն,

Բիբարն ու աղն:

Թան ու թխթմոր-աման,

Պանիրն ու չորթան,

Գոմն ու մարագ

Ծըծուֆն ու կարասք:

Բակն ու ցանի տուն,

Հաւն ու հաւի բուն.

Պտտուրն ու փթիր,

Խառչէկաթն ու թոնիր,

Ժափիկն ու մածուն,

Պուածքն ու թթուն,

Գինին ու ձուկն,

Մանղակն ու պտուկ:

Կարասն ու տիւճիկ,

Կուժն ու կաղալիկ,

Ուտողքն ու սեղան,

Պղինձն ու քեասան,

Արտն ու անդաստան,

Բաղչէն ու բօստան,

Կալն ու ջաղացն,

Յորեան ու հացն,

Չին ու շորին,

Խոտ, յարդն ու գարին.

Կոֆն ու էշը,

Եզն ու գոմէշը

Ծառն ու ճիւղն,

Բարն ու պտուղն.

Հովիւն ու ոչխար,

Էծն ու գառ—

Միշտ և յաւիտեան,

Օրհնեցի և պահպանիցի:



## Ա Ն Է Ծ Ք

Ինեկ, Մինեկ, Վարդիկ, Ճինեկ,

Օվասափ մոճեկ.

Սարի ծաղիկ կոճիկ,

Թօրւան վիրվի էրկու կոր ախչիկ:

Արևուդ մեռնի ձօռօյի Նազար,

Ճապալէզի Կազար.

Աբգարի Նալօն,

Պըլսթրօյի Պետօն,

Նարեկայ մուխսի Կալօն,

Արարուց ծուռ Պիտօն.

Կազար, Նազար, Շէկօն, Ակօն,

Փիլօ, Գէվօն, Չաչալ-Պաչօն.

Իլլան Կճօն, իլլան Կճօն:

Խէր խոռալթ,

Շան միս կտաւատ.

Էրկու շուն կնացին Բաղդադ.

Կուան, էլան խաղը մալամաթ:

Չար աչք, չար փուռ,

Չար փուռն ի կրակ.

Կոր անձղան պլսթրակ,

Սխկի, թալ աչքդ.

Թէ չը ժրաւ, փու քէօ իրես...

## Ա Ղ Լ Է Ս

Յօրէս էկաւ մէկ մէկ ուտի,

Աղուէսն էկաւ լանճիկ լանճիկ,

Ոտեր ունէր կարճիկ կարճիկ,

Սիրար ուզեց հաւի քարճիկ:

Ո՛ւյ իմ չալըք-մալիք, չալմալալիք,

Չալմ պտորիկ, չալմատըպիկ, տաշտահոտ,

Տըմպլաճակատ, խաշխատըպիկ, տողիկ ճուտեր:

Աղուէսն պառկեց աղբի տակին:

Աչքերը ձգեց չաղ հաւի ձագին,

Նետով կըտամ աչքի տակին:

Ես մի բատուկ զարկած պահեմ,

Ելլեմ երթամ ձագերս հանեմ,

Ես էն աղուէսն կու սպանսնեմ,

Յօրէս էկաւ Զաւաթ-Պանը,

Ո՞վ սովբացրաւ ամեն բանը.

Աղջիկ՝ վեր կաց, ջուր տուր հորթին,

Մեռնի կատաւիրոջ որդին:

Ա՛յ տղայ, անունըդ է Աւագ,

Քեզ կուտացնեմ մեղր ու կարագ,

Համ տիրացու, համ սարկաւազ,

Մէկ ճուտ ունիմ իմ յիշատակ:

## Պ ա ր ե ր գ

Տարան, թող տանեն Զընկլիկ. հանօր նանանօր.

Զատկին կը բերեն, Զընկլիկ. հանօր նանանօր.

Կանաչ մոմերով, Զընկլիկ. հանօր նանանօր.

Դեղին սօլերով, Զընկլիկ. հանօր նանանօր.

Նախշուն թաթերով, Զընկլիկ. հանօր նանանօր.

Ոսկի բաղերով, Զընկլիկ. հանօր նանանօր.

Կըլոր սօտերով, Զընկլիկ. հանօր նանանօր.

Սալու լաչիկով, Զընկլիկ. հանօր նանանօր.

Գուհաղ մէզարով, Զընկլիկ. հանօր նանանօր.

Տարան թող տանեն Զընկլիկ.

Զատկին կը բերեն Զընկլիկ.

Ծ ո յ Լ հ ն ձ ո ղ ք

Ա լ է ք ս ան

Ու իր տըմանին փեսան,  
 Քրսան գերընդի  
 Քառսուն յէսան,  
 Նըստեն,  
 Սըրեն,  
 Պառկեն,  
 Քաղեն,  
 Փոծխեն,  
 Կապեն,  
 Բարդեն,  
 Յետին անգամ համրեն, տեսան  
 Բարդէն պակաս էր քըսան:

Ա Ր տ ու տ ի կ

Արտուտիկ,  
 Նախշուն տօտիկ.  
 Իջնեն կալեր,  
 Գողարիկ մողտիկ,  
 Ընտրեն քարեր,  
 Ուտեն կուտիկ,  
 Կը ծըլվան  
 Կըլթիկ կըլթիկ:

Լ ա գ Լ ա գ

Լազլազօ, Հաջի բէզօ,  
 Յուստէ կ'իգաս.—  
 Սև սարերուց:  
 Ի՞նչ ես բերեր.—

Թուխթ մը սապոն:

Ո՞ւր կը տանես.—

Սուսկայ Մամուն:

Որ ի՞նչ անի.

Հաչիկ լըւայ,

Թալի գլխուն,

Ելնէ գարուն:

Հ ա ն դ է ս թ ո չ ն ո ց

Ժողովրդական կատակերգութիւն  
 (Գեղջկական կեանքի վրայ յօրինւած)

Կ ի վ ի վ	}	Թագաւոր կամ պարոն.
Ա լ ի չ ա խ չ ա խ		} Ասպատակողներ
Տ ի ո լ ի լ ի ն		
Շ ա հ է ն-բ ա զ է ն		
Ք ո ո-պ ու պ ու ու ն		

Ա լ ի չ ա խ չ ա խ, Տ ի ո լ ի լ ի ն, Շ ա հ է ն-բ ա զ է ն, Ք ո ո-պ ու պ ու ու ն

Երիշ քըշեցին վըր Լակլակուն.  
 Լակլակ թափ տւեց իր թկերուն, ասաց.  
 Մի գպիք իմ մանրիկ ձագերուն.  
 Ես Ջըրտըկտըն եմ պարոն Կիվիվուն:

Ա լ ի չ ա խ չ ա խ, Տ ի ո լ ի լ ի ն, Շ ա հ է ն-բ ա զ է ն, Ք ո ո-պ ու պ ու ու ն

Երիշ քըշեցին վըր Ագոաւուն.  
 Ագոաւ թափ տւեց իր թկերուն, ասաց.  
 Մի գպիք իմ մանրիկ ձագերուն.  
 Ես Դուամանջին եմ պարոն Կիվիվուն:

4032  
4039

2  
 ԳՐԱԴԱՐԱՆ  
 ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏ. ՊԱՏՄԱԿԱՆ  
 ԲԱՆԳԱՐԱՆ

Ալի չախչախ, Տիուլիլին, Շահէն-բազէն, Քօռ-պուլպուն

Երիշ քըշեցին վըր Լորուն.

Լոր թափ տւեց իր թևերուն, ասաց.

Մի դպիք իմ մանրիկ ձագերուն:

Ես Սարկաւազն եմ պարոն Կիվիվուն:

Ալի չախչախ, Տիուլիլին, Շահէն-բազէն, Քօռ-պուլպուն

Երիշ քըշեցին վըր Խազուն.

Խազն թափ տւեց իր թևերուն, ասաց.

Մի դպիք իմ մանրիկ ձագերուն.

Ես Տանտիկինն եմ պարոն Կիվիվուն:

Ալի չախչախ, Տիուլիլին, Շահէն-բազէն, Քօռ-պուլպուն

Երիշ քըշեցին վըր Տատրակուն.

Տատրակ թափ տւեց իր թևերուն, ասաց.

Մի դպիք իմ մանրիկ ձագերուն.

Ես Ալուրմաղոզն եմ պարոն Կիվիվուն:

Ալի չախչախ, Տիուլիլին, Շահէն-բազէն, Քօռ-պուլպուն

Երիշ քըշեցին վըր Եղունկուն.

Եղունկի թափ տւեց իր թևերուն, ասաց.

Մի դպիք իմ մանրիկ ձագերուն.

Ես Խնամին եմ պարոն Կիվիվուն:

Ալի չախչախ, Տիուլիլին, Շահէն-բազէն, Քօռ-պուլպուն

Երիշ քըշեցին վըր Սարեկուն.

Սարեկ թափ տւեց իր թևերուն, ասաց.

Մի դպիք իմ մանրիկ ձագերուն.

Ես Դափածոզն եմ պարոն Կիվիվուն:

Ալի չախչախ, Տիուլիլին, Շահէն-բազէն, Քօռ-պուլպուն

Երիշ քըշեցին վըր Կոնկուն.

Կոնկի թափ տուեց վըր թևերուն, ասաց.

Մի դըպիք իմ մանրիկ ձագերուն.

Ես մեծ Աշուզն եմ պարոն Կիվիվուն:

Ալի չախչախ, Տիուլիլին, Շահէն-բազէն, Քօռ պուլպուն

Երիշ քըշեցին վըր Ծիծեռնկուն.

Ծիծեռնիկ թափ տւեց իր թևերուն, ասաց.

Մի դըպիք իմ մանրիկ ձագերուն.

Ես Չարխաճին եմ պարոն Կիվիվուն...

II

ԳՐԱԳՐՈՒ ԲԱՆԱՅԻՒՄՈՒԹԻՒՆ

ՀԻՆ ՇՐՋԱՆ

ԱԳԱԹԱՆԳԵՂՈՍ

Գ Ր Ի Գ Ո Ր Լ Ո Ւ Ս Ա Ն Ո Ր Ի Ն

Յայնմ ժամանակի տեսիլ Աստուծոյ երևեալ ի վերայ քեռ թագաւորին, որոյ անունն էր Խոսրովիդուխտարդ, եկեալ խօսէր ընդ մարդիկն, պատմէր տեսիլ և ասէր. Տեսիլ երևեցաւ ինձ յայսմ գիշերի. այր մի ի նմանութիւն լուսայ եկեալ պատմեաց ինձ, եթէ ոչ այլ ինչ գոյ բժշկութիւն հարուածոցն՝ որ եկին հասին ի վերայ ձեր, եթէ ոչ յղեսջիք դուք ի քաղաքն յԱրտաշատ, ածել անտի զկապեալն Գրիգորիոս. նա եկեալ ուսուցցէ զձեզ՝ զեղ ցաւացդ բժշկութեան:

Արդ, իբրև լուան մարդիկն՝ սկսան ծիծաղել զբանիւքն զոր ասաց. սկսան խօսել ընդ նմա և ասեն Եւ դ՞ու ուրեմն մոլեգնեցար. դ՞ու ուրեմն հարաւ ի քեզ. զիմրդ է՝ զի արդ հնգետասան ամ է զի ընկեցին զնա յանհնարին խոր վիրապն, և դու ասես եթէ կենդանի է. արդ և ոսկրոտին իսկ ռւր իցէ. զի նոյնօրին իբրև իջուցին զնա անդր՝ յօձիցն իսկ տեսնեան նոյնժամայն սատակեալ իցէ:

Իսկ կրկնեաց դարձեալ ևս կնոջն զնոյն տեսիլն, և հինգնեաց սպառնալեօք, զի եթէ ոչ պատմեսցէ ստէպ ստէպ, մեծամեծ տանջանս ընկալցի, և հարուածք մարդկան և թագաւորին ևս քան զևս սաստկացի մահու և պէսպէս տանջանօք: Եւ մտեալ անդրէն Խոսրովիդուխտըն՝ մեծաւ երկիւղիւ և զգուշութեամբ ասաց զբանսն հրեշտակին:

Իսկ նոքա վաղվաղակի յղէին անդր նախարար զոմն աւագ՝ որում անուն Օտա կոչէր: Եւ գնաց նա ի քաղաքն Արտաշատ հանել զնա ի խոր բանդէ վիրապին: Արդ, իբրև եկն եհաս Օտայն ի քաղաքն յԱրտաշատ, ընդ առաջ ելանէին նմա քաղաքացիքն՝ հարցանել զպատճառս զալոյն. և նա ասէ ցնոսա, թէ վասն կապելոյն Գրիգորի եկեալ եմ՝ տանել զնա: Իսկ նոքա զարմացեալ առ հասարակ ասէին. Ո՞ գիտէ թէ կայցէ, զի բազում ամք են զի ընկեցին զնա անդր: Իսկ նա պատմեաց զիրս տեսեանն և զգործն զինչ եղեան:

Իսկ եկին բերին կարս պարանաց երկայնս և ստուարս, և կցեցին իջուցին ի ներքս. աղաղակեաց Օտայն նախարար ի ձայն մեծ, և ասէ. Գրիգորիո՞ս. եթէ կայցես ուրեք՝ եկ ի դուրս, զի տէր Աստուածն քո՞ զոր պաշտես դու՝ նա հրամայեաց հանել զքեզ այտի: Եւ անդէն յոտն կացեալ վաղվաղակի շարժեաց զպարանն, և բուռն հարկանէր: Իսկ սոցա զխտակցեալ՝ ձգեալ հանին զնա ի վեր. և տեսին զի թխացեալ էր մարմինն նորա իբրև զածուխ սևացեալ. և անդէն հանդերձս մատուցեալ զգեցուցին նմա, և խնդութեամբ առին գնացին յԱրտաշատ քաղաքէ, տանել ի Վաղարշապատ քաղաք:

Յայնմ ժամանակի առ վտանգի տարակուսանաց ցաւոցն՝ ելեալ թագաւորն՝ զիւրն առեալ ածէր ընդ առաջ նորա, մերկ խայտառակ. և նախարարքն արտա-

քոյ քաղաքսն սպասէին նմա: Արդ, իբրև տեսանէին զնոսա ի բացէ՛ զի գային, Գրիգորիոս Օտայիւն հանդերձ և այլ բազում մարդիկ՝ որ գային ընդ նոսա յԱրտաշատ քաղաքէ, ընդ առաջ խաղացեալ մոլեգնելով և ուտելով զմարմինս, զիւահարէին և փրփրէին առաջի նորա:

## ՉԵՆՈՒ ԳԼԱԿ

Պատերազմ քուրմերի հետ

Իսկ իշխանքն իբրև լուան՝ ելին ի վերայ բլերն, և տեսին զԱրձանն, զի արս չորեքհարիւր լոկ՝ թէ աւելի կամ պակաս ունէր ընդ իւրն. վաղաղակի ի վերայ յարձակեալ քաջ իշխանացն, ի փախուստ դարձուցանէին զԱրձանն. իսկ այլ զօրքն Հայոց իբրև լուան զձայն դուժին, վաղվաղակի ամենեքեան անդր ի բլուրն հասանէին: Իսկ Արձանն յառաջ մատուցեալ՝ սկսաւ թըշնամանել զիշխանն Հայոց, և ասէ: Յառաջ մատիք, ով զենակորոյսք և ուրացողք զհայրենի ասուածսն, և թըշնամիք բարեփառին Գիսանէի. ոչ զիտէք զի այսօր Գիսանէ ի պատերազմ ելեալ է ընդ ձեզ, և մատնելոց է զձեզ ի ձեռս մեր և հարկանելոց է ձեզ կուրութեամբ: Իսկ իշխանն Արձրուեսաց ի միջ անցեալ, ասէ. Ո՛վ որ խորխտասդ ի վերայ մեր. եթէ վասն Ասուածոցն մարտնչիս, սուտ ես և եթէ վասն երկրիդ, բնաւ իսկ անմիտ ես. զի այս իշխանն է Անգեղ տան, և իշխան Սիւնեսաց տանն և այլք ի պատուաւորաց՝ զորս դուք իսկ ճանաչէք: Իսկ Գիսանոր որդի Արձանին ասէ՛ Լուսրուք մեզ իշխանքդ Հայոց. այս քառասուն ամ է՛ զի ծառայեմք մեծի ասուածոցն, և զիտեմք զգորութիւն նոցա, զի ընդ թշնամիս պաշտօնէից իւրեանց ինքեանք

մարտնչին: Արդ, մեք պատերազմաւ ձեզ չկարեմք ընդդիմանանալ. զի այս տուն է թագաւորին Հայոց, և դուք իշխանք նորա. բայց այս ձեզ յայտնի լիցի, որ թէպէտ մեք ձեզ յաղթել ոչ կարեմք, սակայն լաւ է այսօր մեռանել ի վերայ ասուածոցն մերոց՝ քան թէ դտաճար նոցա ի ձէնջ ապականեալ տեսանեմք, որով և զկեանս ատեցաք և զմահ սիրեցաք: Բայց որ իշխանդ ես Անգեղ տան, յառաջ մատիք, զի մենամարտեսցուք ես և դու:

Յայնժամ ի մէջ անցեալ իշխանն Անգեղ տան և Արձանն, և սկսան անցանել շուրջ զմիմեամբք. և աճապարեալ Արձանն, եհար տիգաւ ի վերայ բարձից նորա, և մերձ տարաւ ընկենուլ զնա. իսկ իշխանն դարձեալ ի վերայ նորա, ասէ. Գիտեա զայս, Արձան, զի տեղույս այս Արձան են կոչելոց. զի քեզ արձանանալ պիտի յայսմ վայրի: Եւ ի վեր ամբարձեալ զձեռն իւր՝ իջուցանէր զսուրն իւր ի վերայ աջոյ թիկանցն, և ի բաց ձգէր զպարանոցն հանդերձ ձախ թիկամբն և տամբն: Եւ նորա անկեալ յերկիր թաւալէր. և կուտեցին արձան ի վերայ նորա, և կայ ի թաղման ի նմին տեղուջն, որ դեռ ևս Արձան կոչի անուն լերինն:

## ՓԱԻՍՏՈՍ ԲԻԻԶԱՆԴ

Արշակ Բ. և Շապուհ

Ապա թագաւորն Պարսից, քանզի գայս լուեալ ի քաղէիցն, տաճիկ ուղտուք արձակէ ի Հայս արս՝ զհողոյ և զջրոյ, զի եկեսցեն բարձցեն նմա զհմայսն: Եւ ընդ սակաւ աւուրս եկին բերին գայն ինչ՝ զորմէ յղեսցըն: Ապա հրաման տայր թագաւորն Շապուհ, զկէս յատակին իւրոյ խորանին՝ հարկանել ի բերեալ հողոյն

Հայոց, և զՂուբն ցանել ի վերայ նորա, և զկէսն ի նոյն հողն զիւրոյ բնակութեան երկրին թողուլ: Եւ ետ սօժել զԱրշակ արքայ Հայոց՝ զառաջև իւրով, և զայլ մարդիկն ի բաց հրամայեաց կացուցանել. և զձեռանէ առեալ՝ շրջէր ձեմելով. և երթեկս առեալ ընդ խորանն, ասէ ցնա, յորժամ ի պարսիկ ի հողոյն ի վերայ ձեմէին. թէ, ընդէ՛ր եղեր իմ թշնամի, Արշակ արքայ Հայոց. զի ես որպէս զորդի սիրեցի զքեզ, և կամեցայ տալ քեզ զդուստր իմ կնուծիւն, և որդի ինձ առնել զքեզ. իսկ դու խոտացար ընդ իս, և քովք կամօք՝ առանց իմոց կամաց՝ եղեր ընդ իս թշնամի. և այս լի երեսուն ամ է, զի պատերազմեցար ընդ իս:

Ասէ Արշակ արքայ. թէ, մեղայ քեզ և յանցեայ, զի ես եկի և կոտորեցի և յաղթեցի թշնամեաց քոց. և ակն ունէի ի քէն պարզև կենաց, և թշնամիք իմ հրապուրեցին զիս և արկին երկրւղուկս ի քէն, և փախուցին ի քէն: Եւ երդումն իմ զոր երդուայ քեզ, յառաջ ածին զիս. և եկի առաջի քո. և ահաւասիկ ծառայ քո ի ձեռս կամ. զինչ և պարտ է քեզ՝ արա զիս, զինչ և կամ իցէ. սպան զիս, զի ես ծառայ քո առ քեզի կարի յանցաւոր եմ, մահապարտ եմ:

Իսկ Շապուհ արքայ առեալ զձեռանէ նորա՝ շրջէր ձեմելով ի չքմեղս. առեալ զնա ածէր ի հայակողմն՝ ի հողն հարեալ յատակն. իսկ իբրև յայն տեղի հասանէր և զհայ հողն կոխէր, մեծամեծ բմբոստացեալ հալարտացեալ՝ այլ ձայն շրջէր. սկսանէր խօսել և ասել. Ի բաց կաց յինէն, ծառայ չարագործ, տիրացեալ տերանցն քոց. այլ ոչ թողից զքեզ և որդւոց քոց զվրէժ. նախնեաց իմոց և զմահն Արտեանայ արքայի. զի այժմիկ ձեր ծառայից զմեր տերանց ձերոց զբարձ կալեալ է. բայց ոչ թողից, եթէ ոչ տեղիդ մեր առ մեզ եկեսցէ: Իսկ զարձեալ առնոյր զձեռանէ, զարձեալ տանէր

յայն հող Պարսից. սպա աշխարէր զասացեալսն, խոնարհէր, բուռն հարկանէր զտից նորա, մեծապէս սպաշխարելով զզջմամբ զասացեալ բանսն: Իսկ յորժամ առեալ զձեռանէ՝ զնա տանել ի հայ հողն, ևս խոտագոյն քան զառաջինսն բարբառէր, իսկ զարձեալ միւս անգամ հանէր յայնմ հողոյն, բանիւք յապաշխարութիւն զառնայր: Յայգուէ և երեկոյն այնպէս շատ փորձ փորձեաց զնա. զի իբրև ի վերայ հարեալ հողոյն տանէր, խոտացեալ ամբարտաւանէր. իսկ ի վերայ բուն գետնոյն յատակին (գայր) և կայր, ի զզջումն զառնայր:

Իսկ իբրև երեկոյ եզև՝ ժամ ընթրեաց թագաւորին Պարսից, քանզի սովորութիւն էր Հայոց թագաւորին բազմական անդէն ընդ նմին առ նմա ի նորին տախտին արկանել բազմական, օրէնք էին՝ զի թագաւորն Պարսից և թագաւորն Հայոց ի միում տախտի բազմէին, ի միում գահոյս. իսկ այն օր՝ նախ զտող բազմականացն թագաւորացն՝ որ անդն էին, զամենեցունց կարգեցին. հուսկ յետոյ զկնի ամենեցունց ի ներքոյ բոլորին՝ զԱրշակայ բազմականն առնէին, ուր զհայ հողն յատակն հարեալ էր: Նախ, ամենեքեան իբրև բազմեցան, չիւրաքանչիւր չափու, յետոյ ածէին բազմեցուցանէին զարքայն Արշակ: Արդ, եկաց բազմեալ ուռուցեալ վայր մի. իսկ յոտն եկաց, ասէ ցթագաւորն Շապուհ. Իմ այդ տեղի, ուր դուզ ես բազմեալ. յոտն կաց այդի, թող ես այդր բազմեցայց, զի տեղի ազգի մերոյ այդ լեալ է. սպա եթէ յաշխարն իմ հասից, մեծամեծ վրէժս ինդրեցից ի քէն:

## ՇԱՐԱԿԱՆՆԵՐ

## Քրիստոսի թաղման

Պարգևատուն ամենեցուն՝ այսօր խնդրի պարգևս 'ի Պիղատոսէ: Եւ արկողն զլոյս՝ որպէս զօթոց հաւանի պատիլ 'ի Յովսէփայ:

Կենդանատուն ամենեցուն՝ այսօր դնի ի նոր գերեզմանի: Եւ գանձն անմահութեան՝ կնքի մատանեան քահանայից:

Արարածոց փրկութիւն Քրիստոս՝ այսօր եղաւ ի նորափոր վիմի: Զոր օրհնեն զօրք երկնից երգով՝ պահպանի ի զինւորացն:

Սահակ Պարթև

## Ապաշխարութեան

Ի նեղութեան իմում օգնեա ինձ տէր, որպէս երբեմն Յովնանու:

'Ի յանցանաց իմոց մաքրեան զիս, տէր, որպէս երբեմն զմաքսաւորն:

'Ի նենգաւոր շրթանց փրկեան զիս, տէր, և յարեանէ ապրեցո:

Ս. Մեսրոպը

Զանապական զհոգևոր զգանձն՝ յապականացու կենցաղս ծախեցի. այլ առ քեզ միայն պաղատիմ, բարերար փրկիչ, խնայեա 'ի մեղուցեալ ծառայս:

Զցանկ հոգւոյ իմոյ քակտեցի և եղէ անբարունակ որդ. այլ առ քեզ միայն պաղատիմ, բարերար փրկիչ, խնայեա 'ի մեղուցեալ ծառայս:

Ոստաքանց եղէ ես որպէս զարմաւենի, պողակո-

րոյս՝ որպէս ձիթենի. այլ անյիշաչար և անոխակալ փրկիչ, խնայեա 'ի մեղուցեալ ծառայս:

Ս. Մեսրոպը

## Ս. Հռիփսիմեանց

Անձինք նւիրեալք սիրոյն Քրիստոսի, երկնաւոր նահատակք և կուսանք իմաստունք. 'ի պարծանս ձեր բարձրացեալ տօնէ մայր Սիրոյն՝ դստերօքն իւրովք:

Բարբառք երկնաւորք լցին զերկիր. քանզի հոս անուշից բուրեցայք 'ի Քրիստոս. ողջակէզք բանաւորք և զոհք փրկութեան և որովք անարատք ընծայեալք Աստուծոյ:

Գեղեցկութիւնք մարմնաւոր պայծառութեան ձերոյ՝ յիմարացոյց զթագաւորն և պակեան հեթանոսք. 'ի գեղ սքանչելի աստածատուր կուսանացն տարփաքեալ զւարթունքն ընդ մարդկան տօնեցին...

Կոմիտաս

## Վարդանանց

Նորահրաշ պսակաւոր և զօրագլուխ առաքինեաց. վառեցար զինու հոգւոյն՝ արիաբար ընդդէմ մահու: Վարդան, քաջ նահատակ, որ վանեցեր զթշնամին, վարդագոյն արեամբդ քո պսակեցեր զեկեղեցի:

Երկնաւոր թագաւորին զինու յաղթեալ պատերազմին, խոհական իմաստութեամբ խոհեմացեալ անձառապէս. Սորէն խորհրդական և ծանուցեալ անուն բարի, խաչելոյն վկայ եղեալ, հեղմամբ արեան պսակեցաւ...

Ներսէս Ծնորհալի

## ԿՈՐԻԻՆՆ

Վարք Ս. Մեսրոպի

էր այրս այս Մեսրոպի ի Տարօն գաւառէ, ի Հացեկաց գեղջէ, որդի Վարդանայ. ի մանկութեան աստիս վարժալ հելլենական դպրութեամբն, և եկեալ ի դուռն Արշակունեաց թագաւորացն Հայոց, կացեալ յարքունական դիւանին, լինէր սպասաւոր արքայատուր հրամանին: Եւ հմուտ եղեալ աշխարհակեաց վարուց՝ ի դիւերական կարգս, և յառաջագէմ և սիրելի էր ամենեցուն, մեծամեծաց և փոքունց, իմաստութեանն առաջնորդեալ յիրաւունս ամենայն:

Յետ այսորիկ ի ծառայութիւն Աստուծոյ մարդասիրի դարձեալ, մերկանայր յինքենէ զամենայն զբաղմունս, և առեալ զխաչն պարծանաց՝ ըստ աւետարանական հրամանին, ելանէր զկնի ամենակեցոյց խաչելոյն Քրիստոսի. և հակեալ զհրամանաց պայման, ի խաչակիր գունդն Քրիստոսի աշակերտացն խառնի. և զկրօնս միանձանց յանձն առեալ յաւէտ կրօնաւորէր: Եւ բազում և ազգի ազգի վշտակցութիւն ընդ աւետարանին կրէր. և ամենայն կրթութեան հոգեւորացն զանձն տուեալ՝ կրօնաւորէր ի քաղց և ի ծարաւ, ի ցուրտ և ի մերկութիւն. խոտաբուտ եղեալ, խարազնագգեստ և զեանատարած անկողնօք, և զհանգիստ քնոյ գիշերոյ յտնաւոր տքնութեամբ՝ ի թօթափել ական վճարէր բազում անգամ. և զայս առնէր ոչ սակաւ ժամանակս: Եւ գտեալ զոմանս զգաստասէրս՝ յինքն յարեցուցանէր, աշակերտել նմին աւետարանական կրօնաւորութեան: Եւ ամենայն փորձութեանց ի վերայ հասելոց՝ կամայական քաջութեամբ տարեալ, և նովիմբ լուսաւորեալ և պայծառացեալ ի հանդէս ճգնաւորական, հաճոյ Աստուծոյ և մարդկան երևեալ:

## ԵԶՆԻԿ ԿՈՂԲԱՑԻ

Հայկական Նախապաշար ու մտեր

...Եւ ոչ միայն յանասունսն են բնական ազգեցութիւնք, այլ և ՚ի մարդկան, որ խօսուենք և իմաստուենք են: Որպէս յորժամ ակն խաղայցէ, բնական ազգեցութեամբ վասն զնորոգ ոք տեսանելոյ լինի՝ ասեն՝ նշանակ, որք այնմ ստէպ միտ զնեն: Յորժամ յերանս կամ յայլ անդամս միս խաղայցէ, նշանակ հեծանելոյ, կամ սիրելելոյն պատահելոյ, կամ զան բնակելոյ: Նոյնպէս և յորժամ ոտն կծիցէ կամ ձեռն, մին՝ ասեն՝ ճանապարհի գնալոյ նշանակ է կամ անձրևի, և միւսն՝ առնելոյ ինչ յումքէ կամ տալոյ: Նոյնպէս և փնչելն, և լեզուին կծել, և ունկանն հարկանել, և ըմբանին կծել, ոչ եթէ յայտոյ իմքէ լինի, այլ ՚ի բնական ազգեցութենէ անտի՝ զոր տնկեալ է արարչին յանդամս: Զի յորժամ ՚ի խորհրդական զգուշութենէն զեղծիցի, բնական ազգեցութեամբն պատսպարեսցի:

Եւ յօրանջելն և ձգտել, որպէս կարծեսցին ոմանք, ոչ ՚ի դիւէ լինի՝ այլ ՚ի մեղկութենէ և թուլութենէ մարմնոյն: Ուստի զստէպ յօրանջելն և ձգտելն՝ հմուտ բժիշկք ՚ի մթերելոյ մաղասոց ասեն, զոր և փորձն իսկ յայտ առնէ. զի յորժամ ստէպ ոք յօրանջիցէ, սարսափիւն զայ զոսկերօքն և քրտամուշքն զնան ընդ անդամսն:

Եւ ոչ փնչելն ՚ի հրեշտակէ, այլ կամ ՚ի ցըսոյ՝ կամ վասն այլ իրիք բնական ազգեցութեան: Նաև յոգոցն հանել՝ երբեմն յիշատակաւ լինի, և երբեմն առանց յիշելոյ զոք: Եւ զի բնական ազգեցութիւնք են և ոչ ՚ի դիւաց, յայտ անտի է՝ զի և յանասնոց բնութիւնս գտանին նոյնք: Եւ յոգոցն հանել՝ յորժամ ոչ զոք կամ զինչ



ինչ բարի կամ զկարիս յիշելոյ լինիցի՝ բնական ազգեցութիւն է, առ ամփոփելոյ զոմն ընդ երկիւղիւ աբարչին, և ճանաչելոյ զիւրոյ բնութեանն տկարութիւն: Եւ յորժամ յիշատակաւ լինիցի կամ առ անարժանս ինչ և զֆլասսս աշխարհելոյ: Որպէս յորժամ ի լրջեաց ծուլայցէ, զիշերական երազովքն ամփոփի ընդ երկիւղիւ...

### Երկնային մարմինները

Լուսին, ասեւն, քան զարեգակն երեսուն օր անցեալ ընդ ամենայն աստեղատունսն, այսինքն ընդ ամենայն երկինս, հասանէ ի նոյն տեղի. և արեգակն ի տարւոջ: Եւ երկինք զմի տիւ և զիշեր առածեալ զինքեամբք, շրջին ի նոյն տեղի: Եւ եւթն աստղ միայն է գնայուն, և այլն ամենայն բևեռեալ են յերկինս. և որ գնայուն աստեղքն են՝ արեգակն և լուսին, և այլ ևս հինգ աստեղք, ոչ եթէ յարեւելից յարեւմուտս գնան՝ այլ յարեւմտից յարեւելս:

Եւ տան օրինակ ինչ՝ որ ոչ նման է, եթէ յորժամ անիւ շրջանակիցի, և մրջին մի ի խեցին գնայցէ յարեւմտից կողմանէ ընդ արեւելս, վասն անուին աբազազոյն ընդ արեւմտից կողմն շրջելոյ թուի՝ թէ մըրջիւնն յարեւելից յարեւմուտս կոյս ընթանայցէ. որ ոչ յարեւելից յարեւմուտս կողմն գնայցէ՝ այլ յարեւմտից յարեւելս և անիւն ստէպ շրջելովն այնպէս երեւցուցանէ:

Եւ երկինք, ասեւն, որչափ ի վեր են՝ դոյնչափ ի խոնարհ են, և դոյնչափ ամենայն կողմանց շուրջ զերկրաւ, և զերկիրս շուրջ շուրջ պատէ, և զճուրն և զերկիր՝ օդ, և զօդն և զճուր և զերկիր՝ հուր: Եւ լուսնի

չիք իւր լոյս առանձին, այլ յարեգակէ գայ ի նա լոյսն. և յայտ անտի է, ասեւն, զի յորմէ կուսէ արեգակն իցէ, յայնմ թերէ սկսանի ի նմա լոյս ծնանել. և ըստ հեռաւորութեան արեգականն՝ սակաւ գայ ի նա լոյսն, և ըստ տակաւ տակաւ մերձենալոյն՝ յաճախէ ի նա լոյսն. և յորժամ մօտ հասանէ ի նա՝ ընու. և յորժամ անցանէ զարեգակամբ՝ սկսանի տակաւ նւաղել, և որչափ ի բացն հեռանայ՝ այնչափ պակասէ ի նմանէ լոյսն, մինչև ամենևին նւաղէ. և յորժամ միւս անգամ հանդիպի, ծագէ ի նմա սակաւիկ ինչ ի լուսոյն վասն հեռաւորութեան. և որչափ մերձենայ, այնչափ առ սակաւ աճէ ի նա լոյսն...

...Եւ լուսին, ասեւն, ի ներքոյ է քան զարեգակն է քան զամենայն աստեղս. և քանզի ի ներքոյ է, յորժամ կշիռ դէպ արեգական պատահիցէ՝ յայնժամ խաւարի արեգակն: Եւ պատճառս փոփոխմանց տարերաց չորից բնութեանցն զաստեղս՝ իբրև զկենդանիս ինչ՝ դնեն: Զայս ամենայն ասեւն հայթայթանօք, զի զերկինս և զլուսաւորսն կենդանիս և աստուածս կարծեցուցեն...

### ԴԱԻԻԹ ԱՆՅԱՂԹ

#### Յ ա ղ ա գ ս Ս ե ո ի

...Եւ այլ ազգ դարձել սեռ ասի, ընդ որով դասի տեսակն. ըստ նմանութեան թերևս սոցայցր ասացեալ: Եւ քանզի սկիզբն իմն է այսպիսի սեռս ընդ սովաւցն, և թուի և զբազմութիւն պարունակել զամենայն ընդ սովաւցն: Արդ եռակի սեռոյր ասացելոյր՝ յաղագս երբորդին առ իմաստասէրս է բան. զոր և ենթադրելովք բացատուեցին, սեռ գոլ ասելով զըստ բազմացն և տար-

բերեցելոցն տեսակաւ ի ներում զինչէն ստորոգեալ-  
որդոն՝ կենդանին քանզի ստորոգեցելոցն է ինչ՝ որ  
զմիտջէ ասի միայնոյ, որպէս անհատքն. որդան՝ Սոկ-  
րատէսն. և սայն և այսն: Իսկ որ զյոլովիցն իբր սեռ-  
քըն, և տեսակքն, և տարբերութիւնքն, և յատուկքն,  
և պատահքն հասարակաբար, այլ ոչ յատկապէս ումեք:  
Եւ է սեռ, որդոն՝ կենդանին. և տեսակ, հիկէն՝ մարդ-  
և տարբերութիւն, որպակ՝ բանական. և յատուկ հի-  
բար՝ ծիծաղական. և պատահ, որդոն սպիտակն, սեւան,  
նստեղն:

Արդ զմիտյր միայնոյր ստորոգեցելոցն տարբեր  
են սեռքն, այնու՝ որ զյոլովիցն է բացատուեալ ստո-  
րոգել ըստ յոլովիցն տեսակից, զի տեսակն թէպէտ և  
յոլովիցն ստորոգին, այլ ոչ տեսակաւ տարբերեցելոց՝  
այլ թւով, քանզի մարդ տեսակ ելոյր՝ Սոկրատոյր և  
Պղատոնոյր ստորոգի, որք ոչ տեսակաւ են տարբերք,  
այլ թւով: Իսկ կենդանին սեռ ելով, մարդոյր և ձիոյր  
և եզին ստորոգի, որք տարբերին և տեսակաւ ի մի-  
մեանց, այլ ոչ թւով միայն:

Եւ յատկոյրն տարբեր է սեռն, զի յատուկն զմի-  
ոյր տեսակոյր, ոյր է յատուկ. ստորոգի և զընդ տեսա-  
կան անհատիցն. որպէս ծիծաղականն մարդոյր միայ-  
նոյր և զըստ մասանցն մարդոցքն. բայց սեռն ոչ զմի-  
ոյր տեսակոյր ստորոգի. այլ զյոլովից և զտարբերեցե-  
լոց տեսակաւ:

## ԵՂԻՇԷ

### V դ ա Ր Ի կ ա ն ա յ ք

Իսկ կանայք երանելի առաքինեացն, և կապելոցն  
և անկելոցն ի պատերազմին, ընդ ամենայն աշխարհն  
Հայոց համօրէն համարել ես ոչ կարեմ. զի բազում  
այն են՝ զոր ոչ գիտեմ, քան թէ գիտիցեմ: Զի հինգ  
հարիւրով չափ յականէ յանուանէ ճանաչեմ. ոչ որ մի-  
այն աւագագոյնքն էին, այլ զբազումս ի կրտսերագու-  
նաց անտի:

Ամենեքեան միահամուռ գերկնաւոր նախանձ բե-  
րելով, ոչ ինչ ընդհատ երևեցան յանցանէ՝ որ ոչ ճա-  
շակեցին զաշխարհ: Քանզի եթէ աւագագոյնք էին, և  
եթէ մանկագոյնք, զմի առաքինութիւն հաւատոց զգե-  
ցան: Ոչ ինչ յիշեցին ամենեին զանուն փափկութեան  
մայրենի ազատութեան, այլ իբրև մարդք՝ որ վշտա-  
բերք լեալ իցեն անդատին ի շինական սովորութեանցն  
տանջելով վարեալ զկեանս աշխարհիս, անդարգոյնք ևս  
քան զնոսս յանձն առին զհամբերութիւն վշտաց:

Ոչ միայն յոգիսն միխթարեալ կացին առ անե-  
րելոյթ զօրութիւնն յուսոյն յաւիտենից, այլ և մարմ-  
նոյ նեղութեամք առաւել ևս բարձին զբեռն ծանրու-  
թեան: Զի թէպէտ և ունէին զիւրաքանչիւր ձեռնասուն  
սպասաւորս, ոչ որ երևէր ի նոցանէ՝ թէ որ տիկիինն  
իցէ և կամ որ նաժիշտն. մի հանդերձ էր հասարակաց,  
և միապէս գեանախշտիք երկոքեան: Ոչ որ ումեք ան-  
կողնարկ լինէր. քանզի և չճանաչէին իսկ զխոտեղէնսն  
ընտրել ի միմեանց. մի գոյն թխութեան փարայիցն,  
և մի գոյն սևութեան սնարից բարձիցն:

Ոչ գոյր նոցա համեմ խահամոքք անուշարար ա-  
ւանձին, և ոչ հացարարք որոշեալ ի պէտս սպասու ըստ  
ազատաց կարգի, այլ հասարակաց էր: Շաբաթամուսն

լստ կարգի միայնակեցաց, որ յանապատս բնակեալ են: Ոչ ոք ումեք ջուր ի ձեռս արկանէր, և ոչ կրտսերք աւազաց դաստառակս մատուցանէին, չանկաւ օջանն ի ձեռս փափկասուն կանանց, և ոչ մատուցաւ իւր ի զուարթութիւն խրախութեան: Չեղան առաջի սուրբ սկտեղք, և ոչ անկան բաժակակալք յուրախութիւն. չեկաց ուրուք նոցա նուիրակ առ դուրս, և ոչ կոչեցան պատականք յարանց ի տաճարս նոցա. չյիշեցան նոցա՝ թէ դուցէ ոք ամենեկին ի բնակամանունդ դայեկաց և կամ բնաւ ի սիրելի հարազատաց:

Փոշոտեցան և ծխոտեցան սրահակք և սրսկապանք նորեկ հարսանց, և սարդի ոստայնք ձգեցան ի սենեակս առագաստաց նոցա. կործանեցան բարձրագահք տաճարաց նոցա, և խանգարեցան սպասք երեխանաց նոցա. անկան կործանեցան ապարանք նոցա, և տապալեալ աւերեցան ամուրք ապաստանի նոցա... Աչօք իւրեանց տեսին գյափշտակութիւն արարոց իւրեանց, և ականջօք իւրեանց լուան զվիշտս չարչարանաց սիրելեաց իւրեանց. առան զանձք իւրեանց յարքունիս, և ոչ մնացին ամենեկին զարդք երեսաց իւրեանց:

Տիկնայք փափկասունք Հայոց աշխարհին, որ գըրգեալք և գգուեալք էին յիւրաքանչիւր պատեռունս և ի գահաւորակս, հանապազ բոկ և հետի երթային ի տունս աղօթից, անձանձրոյթ խնդրեալ ուխտիւք՝ զի համբերել կարասցեն մեծի նեղութեանն: Որ ի մանկութենէ իւրեանց սնեալ էին ուղղովք զուարակաց և ամծովք էրէոց, խոտաբուտ կենօք իբրև զվայրենիս ընդունէին զկերակուրն մեծաւ խնդութեամբ, և ոչ յիշէին ամենեկին զսովորական փափկութիւնն: Սկացեալ ներկան մորթք մարմնոց նոցա. վասն զի ցերեկ աւրակէղք էին և զամենայն գիշերսն գետնաբեկք: Մաղմոսք էին մշտնջենաւորք՝ մրմունջք ի բերանս նոցա,

և մխիթարութիւնք կատարեալք՝ ընթերցուածք մարգարէիցն: Միաբանեցին երկու երկու՝ իբրև ամուլք հաւանք և հաւասարք՝ ուղիղ տանելով զակօսն արքայութեանն, զի առանց վրիպելոյ հասցեն ի նաւահանգիստըն խաղաղութեան:

Մոռացան զկանացի սկարութիւն, և եղեն արուք առաքինիք ի հոգևոր պատերազմի. մարտ եղեալ կուեցան ընդ մեղսն կարևորս, հատին կտրեցին և ընկեցին զմահաբեր արմատս նորա: Միամտութեամբ յաղթեցին խորամանկութեանն, և սուրբ սիրով լուացին զկապուտակ ներկուածս նախանձունս. հատին զարմատս ազահութեան, և չորացան մահաբեր պտուղք ոստոց նոցա: Խոնարհութեամբ կուփեցին զանբարտաւանութիւն, և նովին խոնարհութեամբ հասին երկնաւոր բարձրութեանն: Աղօթիւք բացին զփակեալ դրունս երկնից, և սուրբ խնդրուածովք իջուցին զհրեշտակս ի փրկութիւն. լուան աւետիս ի հեռաստանէ, և փառաւորեցին զԱստուած ի բարձունս:

Այրիք որ ի նոսա էին՝ եղեն վերստին հարսունք առաքինութեան, և բարձին յանձանց զնախատինս այրութեանն: Իսկ կանայք կապելոցն կամօք կապեցին զմարմնաւոր ցանկութիւնս, և եղեն կցորդ չարչարանաց սուրբ կապելոցն. ի կեանս իւրեանց նմանեցին քաջ նահատակացն մահուամբ, և ի հոռաստանէ եղեն վարդապետք մխիթարիչք բանդարկելեացն: Մատամբք իւրեանց վաստակեցին և կերակրեցան, զկարգեալ ոտճիկ նոցա յարքունուտո՝ ամ յամէ թոշակ առնէին և տային տանել նոցա ի մխիթարութիւն: Անարիւն ճիպոնանց նմանեցին, որ երգոյն քաղցրութեամբ առանց կերակրանաց կեան, և կենդանի են միայն զօրն ծծելով, զանմարմնոցն բերեն զնմանութիւն:

Բագում ձմեռաց հալեցան սառնամանիք, եհաս

գարուն և եկին նորեկ ծիծեռունք, տեսին և խնդացին կենցաղատէր մարդիկ, և նոքա ոչ երբէք կարացին տեսանել զանձկալիսն իւրեանց: Ծաղիկք գարնանային յիշատակեցին զպսակատէր ամուսինս նոցա, և աչք իւրեանց կարօտացան տեսանել զցանկալի գեղ երեսաց նոցա: Սպառեցան բարակք որսականք, և խցեալ կուրացան արշաւանք որսորդաց: Բնագրօք յիշատակեցան նոքա, և ոչ մի տօնք տարեկանաց ոչ ածին զնոսա ի հեռաստանէ. ի ճաշատեղս նոցա հայեցան և արտասուցին, և յամենայն յատեանս յիշեցին զանուանս նոցա: Բազում արձանք կանգնեալ էին յանուն նոցա, և անունք իւրաքանչիւր նշանակեալ ի նոսա:

Եւ իբրև այնպէս յամենայն կողմանց ալէկոծ լինէին միտք նոցա, ոչ ինչ կասեալ թուլացան յերկնաւոր առաքինութենէն: Արտաքնոցն երևէին իբրև այբիք սզաւորք և չարչարեալք, և յոգիս իւրեանց զարգարեալք և մխիթարեալք երկնաւոր սիրովն: Ոչ ևս սովորեցին հարցանել զեկեալ ոք ի հեռաստանէ, եթէ երբ լինիցի մեզ տեսանել զսիրելիսն մեր. այլ այն էին իղձք աղօթից նոցա առ Աստուծ, եթէ որպէս սկսանն՝ քաջութեամբ ի նմին կատարեսցին լի երկնաւոր սիրովն:

### ՂԱԶԱՐ ՓԱՐԲԵՅԻ

Վահան Մամիկոնեան ի մի կռիւք

...Եւ քաջաբար ի մէջ ամենայն զօրացն Պարսից յարձակէր հանդերձ լաւ ուխտապահ արամբքն սակաւութք, որ փնային առ նմա: Եւ ապշեալ ընդ ահաւոր աներկիւղ ուժին զօրավարին Հայոց Վահանայ և ընդ այլ սակաւ այնքան արանցն որ ընդ նմա, զօրագլխին Պարսից Շապուհ ճեպով ցիշխանն Սիւնեաց առ Գրիհոն յղէր,

ասէ. «Ձեռն տուր յիս կողմն, վասն զի իրս անպատումն իմն և նորոզս ցուցաւ. զի թէ արդարև զօրութիւն իմն աներևոյթ այլ է, որ օգնէ նոցա և մեզ չերևի՝ զայն ևս ոչ զիտեմ. բայց եթէ անմտութեամբ ցանկան անձնամահք լինել՝ ապա ի մէջ արարեալ զամենեսեան զնոսա այսօր ձերբակալս առնեմք»: Եւ իշխանն Սիւնեաց Գրիհոնն խնդալից եղեալ ընդ կոչն Շապուհ՝ նշանակելով փութանակի ի տեղին արշաւէր: Եւ զօրավարն Հայոց Վահան Մամիկոնեան, հանդերձ ընդ իւր միասիրտ սակաւ արամբք, օգնութեամբ աջոյ հօրին յարձակեալ՝ հերձանէր զբովանդակ գունդն Պարսից, որպէս յորդահոսանք բազմութիւնք ջրոց, որ հեղեղատեն զերկիր և անցանեն: Եւ ինքն հօրաբար քաջ ուխտակցօքն նման առիւծու ընդ մէջ ամենեցուն յայնկոյս ելանէր. և սպանեալ իւր և արանցն որ ընդ նմա բազում այս հօրս պատերազմոցս ի զօրացն Պարսից՝ հարեալ խոցէին նիզակաւ ընդ անութ կարէվէր և զհպարտ իշխանն Սիւնեաց զԳրիհոն, և զահաւորալուր ամրութիւնն զիսուն, յոր պանծացեալ յուսայր անօրէնն՝ ցեղեալ վեր ի վայր թափ ընդ լեարդն զնիզակատէզն հասուցանէին: Որոյ զառնակոռոջ չարալուկ հեծմամբ յաւուրս սակաւս վրձարեալ զոգին՝ սատակէր անխոստովան. որ պարծէրն ամբարտաւանութեամբ և ասէր, թէ «Ես ընդ Վահանայ և ընդ այլ հայերդ ոչ եթէ նետիւ կուրիմ, այլ գզգզկով պուղեալ զբոլորս ցնդեմ, զն և անդր ցիր և ցան արկից ձորոցդ և դաշտացդ»: Եւ եղև բան հպարտութեան նորա բեկումն նմին. զոր մատնեալ Աստուծոյ ի ձեռս արանց զօրուն Վահանայ Մամիկոնէի մի անգամ և երկիցս զիշխանն Սիւնեաց զԳրիհոն, և զարձեալ երկայնամտեալ ի նա Աստուծոյ իբրև զմարդատէր՝ ներէր խնայելով, զի թերևս զղջացեալ գտցէ ժամ դարձի և ապաշխարութեան, և կեցցէ: Եւ իբրև ոչ զգաստացաւ,

այլ բնաւ ամենևին արհամարհեաց զճշմարտութիւն և եղեալ անպատասխանի յասուածային հարցմանն՝ ընկալաւ զսատակունն ամօթոյ իւրոյ զաստիս և զհանդերձելոցն: Եւ զօրքն Պարօից զկնի փախստէիցն Հայոց անցեալ երթային, յորոց և արս բազումս սպանին ի թուլացեալ մեղկացելոցն...

### ՄՈՎՍԷՍ ԽՈՐԵՆԱՅԻ

#### Ո Ղ Բ

Ողբամ զքեզ, Հայոց աշխարհ, ողբամ զքեզ, հանուրց հիւսիսականց վեհագոյն. զի բարձաւ թագաւոր և քահանայ, խորհրդական և ուսուցող. վրդովեցաւ խաղաղութիւն, արմատացաւ անկարգութիւն. զրդուեցաւ ուղղափառութիւն, քայքայեցաւ տգիտութեամբ չարափառութիւն:

Ողորմիմ քեզ, եկեղեցի հայաստանեաց, խրթնացեալ ի բարեզարգութենէ բեմբին, ի քաջէն զրկեալ հովուէ և հովուակցէ: Ոչ ևս տեսանեմ զբանաւոր քո հօտ ի վայրի դալարւոյ և առ ջուրս հանգստեան տաճեալս, և ոչ ի փարախ հաւաքեալ՝ զգուշանալով ի գայլոց, այլ ցրուեալս անապատաց և գահավիժութեանց...

Վարդապետք տիմարք և ընդ ինքնահաճք, անձամբ առեալ պատիւ և ոչ յԱստուծոյ կոչեցեալ, արծաթով ընտրեալք և ոչ Հոգւով, ոսկեսէրք, նախանձոտք, թողեալ զհեղութիւն, յորում Ասուած բնակէ, և գայլք եղեալ՝ զիւրեանց հօտս զիշատելով:

Կրօնաւորք կեղծաւորք, անձնացոյցք, մնափառք, պատուասէրք քան թէ ասուածասէրք:

Վիճակաւորք հպարտք, դատասացք, զրաբանք,

ծոյք, ատեցողք արւեստից և վարդապետական բանից. սիրողք վաճառաց և կատակերգութեանց:

Աշակերտք հեղզ առ ուսումն և փոյթ առ ի վարդապետել, որք նախ քան զանութիւնն ասուածաբանք:

Ժողովրդականան վէտք, ստահակք, մեծախօսք, անվաստակք, արբեցողք, փնասակարք, փախչողք ի ժառանգութենէ:

Զօրականք անարիք, սնապարծք, զինատեսցք, պղերգք, հեշտասէրք, անժուժկալք, կողոպտիչք, համբարոյք աւազակաց:

Իշխանք ապստամբք, գողակիցք գողոց, կծծիք, կրծիք, ժլատք, ագահք, յափշտակողք, աշխարհաւերք, աղտեղասէրք, ծառայիցն համամիտք:

Դատաւոր տմարդիք, սուտք, խաբոխք, կաշառառուք, անընտրողք իրաւանց, անհաստատք, հակառակողք: Եւ բարձունն առ հասարակ յամենեցունց սիրոյ և ամօթոյ...

Զի թագաւորք տիրեալք խիստք և չարաչարք, բեռինս բառնալով ծանունս և դժւարակիրս, հրամանս անտանելիսս. վերակացուք անհարթարարք, անողորմք. սիրելիք դաւաճանեալք, և թշնամիք զօրացեալք. հաւատ վաճառեալ ընդ սնտախ կենցաղոյս: Հէնք եկեալ անհատք և յովովից կողմանց, կերփումն տանց և յափշտակութիւն ստացւածոց, կապումն զխաւորաց և բանտք յայտնեաց, յօտարութիւն վտարումն ազատաց և անթիւ նեղութիւնք ռամկաց, առումն քաղաքաց և քանդումն ամրոցաց, աւերումն աւանաց և հրդեհումն շինւածոց, սովք անբաւք և հիւանդութիւնք և մահք բազմօրինակք. ասուածապաշտութիւն մոռացեալ, և ալ ընկալութիւն գեհենի...

## Աշխարհագրութիւն Հայաստանի

(Ըստ Խորենացու կրճատւած)։

Մեծ Հայք յեւրոպայ կալով Կապադովկիոյ և փոքր Հայոց առ եփրատ գետով մերձ ի Տաւրոս լեռան, որ բաժանէ գնա ի միջագետաց. և ի հարաւոյ սահմանի ասորեստանիւ, և դառնայ առ Ատրպատականաւ ընդ Մարս մինչև ի մուտս Երասխայ ի Կասբից ժով. իսկ ըստ հիւսիսոյ առ երի կայ Աղւանից և Վրաց և Եգեբրայ մինչև ցնոյն, դարձուածն եփիատայ ի հարաւ կոյս... Եւ ունի մեծ Հայք փոքր աշխարհս հնգետասան՝ որ են այսոքիկ. Բարձր Հայք, որ է կողմ Կարնոյ, չորրորդ Հայք, Աղձնիք, Տուրուբերան, Մոկք, Կորճայք, Պարսկահայք, Վասպուրական, Արցախ, Սիւնիք, Փայտակարան, Ուտիա, Գուգարք, Տայք, Այրարատ... Արդ ունի Բարձր Հայք գաւառս ինն... Չորրորդ Հայք յերի կայ բարձր Հայոց. և գաւառք են ի նմա ութ... Աղձնիք առ Տիգրիս գետով կայ. և գաւառս ունի տասն... Տուրուբերան յերի կայ չորրորդ Հայոց. գաւառք են ի նմա վեցտասան... Մոկք յեւրոպայ կալով Աղձնեաց յամուրս Տաւրոս լեռինն, գաւառս ունի ինն... Կորճայք յեւրոպայ Մոկաց առ ասորեստանիւ. գաւառս ունի մեծտասան... Պարսկահայք յեւրոպայ կայ Կորճէից առ Ատրպատականաւ, և ունի Պարսկահայոց և առ երի Կորճէից. ի նման գաւառք են երեսուն և վեց... Սիւնիք յեւրոպայ կայ Այրարատոյ ընդ մէջ Երասխայ և Արցախայ. ունի գաւառս երկոտասան... Արցախ յերի կայ Սիւնեաց. գաւառք են ի նմա երկոտասան... Փայտակարան յեւրոպայ կայ Ուտիոյ առ Երասխաւ. գաւառս ունի երկոտասան... Ուտի առ մտից կայ Երասխայ ընդ մէջ Արցախայ և Կուր գետոյ. ունի գաւառս զոր Աղւանք ունին՝ եւթն... Գուգարք ի մտից կայ Ուտիոյ, և ունի

գաւառս ինն զոր Վիրք ունին... Տայք առ երի կայ Գուգարաց, ամրացօք և բերդօք կառուցեալ. և ունի գաւառս ինն... Այրարատ ի մէջ կայ յառաջասացեալ աշխարհացդ. գաւառք են ի նմա քսան... Եւ ունի Այրարատ լեռինն և դաշտս, և զամենայն պարարտութիւն, և ծովակն Գայլատոյ, որդն յարմատոյ սիզոյ առ ի զարդ կարմրութեան գունոյ. և զմայր եկեղեցեացն ի թագաւորաբնակ և յարքայանիստ Վաղարշապատ քաղաքի։

## ԱՆԱՆԻՍ ՇԻՐԱԿԱՅԻ

Երկնքի և երկրի միջև եղած շարժումների մասին

Ամենայն արարածքս առ ի յօգուտ մարդկան եղին ըստ բարեբարութեան և մարդասիրութեանն Աստուծոյ. զի որպէս պատճառք ճշմարիտ արարչութեանն, նոյնպէս և անսխալ մատակարարութեանն։ Արդ է բընութիւն մի՛ հողմ, և ամպ և ձիւն և եղեամբ և օդ և ծիածան և ձայն որոտման, նոցին սակի են և շանդիք և ցումունք։ Եւ ի սոցանէ որ սեռական է և պատճառ առ ի պէտս աշխարհի կելոյ. և են ի սոցանէ որ հետեանք են սեռից, և գոյնք առ ի տեսութիւն և երևմունք նշուից։ Արդ հողմոց սեռ՝ ցրտութիւն. իսկ մասունքն ի բաժանմունս բազում. թանձրութիւն գործի՛ համբառնալով զձովային ջուրս, և լեռնայնոյն և դաշտայնոյն առ ի հասարակութիւն մատակարարելով։ Իսկ առ յոյժ ցրտութիւն ձմեռնային ժամանակին ինքն ամպն կտորատի հանդերձ խոնաւութեամբն, բաժանի, բրդի, լնանի, զիզու ի բարձրավանդակ վայրսն, զոր ձիւն անուանեմք։ Իսկ նոյն ցրտութեանն ի պարզ ժամանակին յորժամ ջինջ երկինն լինիցի՝ ի խոնաւութեանէ վերնոյն ձիւնակերպ իջեալ սփռմամբ անօսրու-

թեան հողմոյն, զոր սիրդ կոչեմք, զնի ի վերայ երկրի, զոր եղեամն անուանեմք: Իսկ ի պարզութեան անուշութեան հողմոյն ի ձեռն հրային մասին սփռի տարածանի առ երկրաւս առ ի ծծումն կենդանեաց անձմանց և նւազութեանց, զոր և օդ սովորեցաք ասել...

Իսկ որոտումնդ որ լինի յանկարծակի ի յեղանակա երից ժամանակաց, և ձմերանի ոչ երբէք լինի, այլ գարնայնի յաճախ և սաստկագոյն, ասացից թէ որպէս են, և վասն էր են: Քանզի ձմերայնի ստերջանան ամպք. և որ բերինն ի խոնարհ՝ ինքեանք են այնք հանդերձ ջրային խոնաւութեամբ, վասն որոյ և ոչ ձայն կարեն հանել: Իսկ գարնանային ժամանակին օդն պարարի խոնաւութեամբ. և յարեզակնային ջերմութենէն ջլանայ զհարստութիւն. և առ ի յոյժ փոթորկելն խոնարհի ի ծով, և բերանացեալ համբառնայ զջուրն ի վեր. և ի սաստիկ արբմանէն ծանրութեամբ յառաջ խաղայ, իսկ այլ հողմք շուրջ պատեալ զնովաւ զօրէն կառավարի, զերսասանակս ի ձեռն առեալ ստիպելով անցանէ յերկնային ասպարիսին. իբր առաջին և միջին և վերջին բախմունս և ճայթմունս գործեն, չկարացեալ ընդ գայտութիւն մարմնոյն միանգամայն հոսել զբազմութիւն ջուրցն ծովային, զօրէն զժւարածին կանանց բարձրածիչ ձայնս արձակեն, զոր որոտմունս անւանեմք:

Բայց ոմանք ի փիլիսոփայիցն որ յեկեղեցւոջ ասացին թէ է հողմ սառնային և թանձր, որ և զնա եթեր կոչեմք, նա խոնարհի յամպն զջուրն իբր ոլոռն ոլոռն սառոյց գնդէ, և այն է կարկուտ: Եւ ասեն թէ զորոտումնդ այն հողմն առնէ, և զփայլատակումնս. զի ամենայն արարածք բնութեամբ ունին յինքեանս հուր, եթէ ցամաքայինք և եթէ խոնաւայինք. և ի բախել հողմոյն զամպն՝ հուր ելանէ յամպոյն, և ձայն ճայթ-

մանց բախմամբ հողմոյն: Եթէ սակաւ բախէ սակաւ և հուրն ելանէ, և ձայնն. և անդէն ընդ ամպն անցանի, ի վեր բերելով օդոյն: Եւ եթէ ուժգին բախէ հողմն, ուժգին և ձայն և հուրն ելանէ. և չգօրէ օդն՝ ի վեր ցանել զնա ընդ ամպն, ի խոնարհ անկանի. և ի տեղն յոր անկանի՝ խաղաղութեան ակն ոչ ունիմք: Բայց մեք որ զհուր յառաջ տեսանեմք և ապա զորոտն լսեմք՝ այն է պատճառ զի թէպէտ յամպոյն զոյգ ելանէ ձայնն և հուրն, այլ մեզ հուրն առաջոյ երևի, քանզի ակն երնագ է քան զուռնկն. և ակն փոյթ կարէ տեսանել հեռագոյն զհուրն՝ յորժամ յամպոյն ելանէ: Իսկ զձայնն ունկն ոչ կարէ լսել մինչև ի մօտ հասանէ: Եւ զցոլմանէ աստեղացդ ասեն թէ հողմն այն ի պարզ ժամանակի բախէ անդէն ինքն զինքն, և հուր ելանէ, որպէս յամպոյ. բայց անօր ելանէ ի հողմոյն, և ոչ որպէս յամպոյն. և օգոփլ վերաբերեալ անդէն ամփոփի:

Թւաբանական խնդիրն եր

(Անանիա Շիրակցու, զրւած VII դարում)

I. Հօրիցս լսել եմ, թէ հայերի և պարսիկների պատերազմի ժամանակ, Զօրակ Կամսարականը շատ բաշտութիւններ էր անում: Որպէս թէ մի ամուսայ ընթացքում երեք անգամ յարձակեց պարսից վրայ: Առաջին անգամ կոտորեց զօրքի կէսը. երկրորդ անգամ—<sup>1</sup>/<sub>4</sub> մասը, իսկ երրորդ անգամին—<sup>1</sup>/<sub>11</sub> մասը: Իսկ մնացածները փախան դէպի Նախիջևան, թւով 280: Իմացիր այժ թէ ռքքան էր պարսից զօրքը: Պատասխան—1760.

II. Հայերի՝ Պարսիկներից ապստամբելու ժամա-





չօք իբրև ի ցամաքի շարահարեալ տողազրէ զհաստակաւոյցն վիմացս կարգս: Յորոց վրայ լար եղեալ ձգէ զպարխապն շուրջանակի՝ իբր ձիարշաւանօք հինգ. և պարխապն է հրաշակերտ, անեղակերպ բարձրաբերձ լայնանիստ բրգամբք և բարձրացեալ աշտարակօք զարդարեալ, անկիւնաւոր, խորանման տախտակաձև յինքեան ունելով գահոյք զբօսանաց. յորում հանդերձ որդովք և ազատակոյտ զօրօք՝ միշտ ուրախանայր արքայ: Իսկ և զգլուխս պարսպին ածեալ զկիրճս զժուարամուծս բարանձաւին, ի համբոյրս միմեանց մերձեցուցանէ ի շրթունս խորայտակ հիմանց ծովուն՝ զնէ դրունս ահաւորատեսս հաստահեղոյսս բեւեռապլինգս. որով է զմասն ինչ ծովուն ի կղզին կոյս հատանելով, հրաշալիս իմն ներգործեաց. բազում նաւաց յօրինեալ խաղաղ և անքոյթ նաւահանգիստ, բարձրագոյն հրաշակերտաց քան զԱղեքսանդրին ի Մակեդոնի քաղաքի: Եւ որպէս ինձ թուի՝ զանցոյց զարմանալեօք զՇամիրամեան փորեածոյ սենեկօքն, և զամբարտակաւ գետոյն՝ որ առ ստորոտաւ լերինն Վարագայ. զի նորայն գոնեա ի վերայ ցամաքի, իսկ սա ի մեծ խորոց ծովուս արևեստակեալ, հարստահարէ զամենայն միտս և զգործս իմաստնոցն յառաջ քան զինքն եղելոց...

Եւ է կարգ շինուածոյ տաճարին անեղ իմն և զարմանալի. և այնքան բարձրագոյն և անհաս է մտաց, զոր օրինակ թէ իմաստուն ոք այր ընդ մի կարգ խորանի միոջ զբազում ժամս նայեսցի, արտաքս ելեալ՝ ոչինչ յորոց նայեսցաւն պատմել ումեք կարասցէ: Վասն զի են ի նմա ոսկեզարդ գահոյք, յորս բազմեալ երեկ արքայ նազելի ճոխութեամբ, շուրջ զիւրեաւ ունելով պատանեակա լուսատեսակս՝ սպասուորս ուրախութեան. ընդ սմին և դասս գուսանաց, և խաղս աղջկանս, զարմանալոյ արժանիս. անդ են սուսերամերկաց հոյք,

և ըմբշամարտաց պատերազմունք, անդ և դասք առիւծուց և ալոյց զազանաց. և անդ երամք հաւուց զարդարեալք ի պէս պէս պաճուճանս. զոր եթէ զամենայնն որ ի նմա գործք՝ ի պէտք են անձինն և լսողաց: Եւ է փառք տաճարին անեղ իմն և զարմանալի. եղեալ են ի նմա դրունք հատուածոյք մանր յօրինածով և հրաշալի գեղգեղմամբ. ի բունալն իւրեանց երկբացիկ են օգաբերք զովացուցիչք, իսկ հուպ առ միմեանս գոլով երևին իբրև զմի պատկեր...

## ԱՐԻՍՏԱԿԷՍ ԼԱՍՏԻՎԵՐՏՅԻ

Բասենի կոտորածը

...Ո՛վ ողորմութեան քո Ասուած, որ այնքան ներեցեր անօրինացն խրոխտալ ի վերայ խաշին արօտի քո: Յիշեան զժողովուրդ քո զոր ստացար ի սկզբանէ գալստեան միածնի քո, և փրկեցեր արեամբ օծելոյդ: Ընդէր մերժեցեր, Ասուած, ի սպառ, բարկացար սրամտութեամբ քո և մատնեցեր զմեզ ի ձեռս արանց անօրինաց, խստաց և ապստամբաց: Մի՛ յիշեր զմեզս մեր, և մի՛ վասն մեղաց մերոց դարձուցաներ զերեսս քո ի մէնջ. այլ յիշեան զձեռն քո հզօր և զբազուկ քո բարձր, որով տիրէիր մեզ, և անուն քո կոչեցեալ էր ի վերայ մեր: Եւ արդ անս դու բարկացար, և մեք մեղաք. վասն այնորիկ մոլորեցաք զերութեամբ ի բազում ազգս, և եղաք իբրև զպիղծս ամենեքեան: Հողմք մերժեցին զմեզ և ոչ ոք իցէ որ կարդայցէ զանուն քո, և որ յիշեսցէ ապաստան առնել զքեզ. զի դարձուցեր զերեսս քո ի մէնջ և մատնեցեր զմեզ վասն մեղաց մերոց: Մի՛ յաւիտեան բարկանար մեզ, ի ժամանակի մի յիշեր զմեզս մեր:

Ո՛հ և աւաղ աւուրն այնորիկ լուսանալոյ. զի լոյսն որ յաւուրն առաջնուսն անմարմին տեսակաւ ի բանէն Աստուծոյ գոյացաւ, և ի չորրորդում աւուրն ընդ մարմնոյ պարուրեալ՝ ի լուսաւորս բաժանեցաւ, իշխան տունջեան և զիշերի լինելով, և աշխարհի ճանապարհորդք յաւիտենից. մինն զմարդ ի գործ յարուցանելով, և միւսն զազանաց համարձակութիւն տալով: Այսօր միջօրեայ աւուրն այնորիկ, մեզ ի խաւար փոխարկեալ զիշերացաւ, զազանաբար ազգն հեթանոսաց որք ի վաղընջուց ի խշտիս իւրեանց մոնչէին, ըստ մարգարէին ձայնի, և յԱստուծոյ հօտիցն խնդրէին կերակուր իւրեանց, ի զիշերանալ մեզ աւուրն այնորիկ՝ ելին և տարածեցան ընդ երեսս երկրի, և գտին որս բազում և յագեցան կերակրովք, և նշխարեցին տղայոց իւրեանց յամս բազումս: Արդ թէպէտ և յամենայն տեղիս որս բաւականապէս պատրաստեցաւ նոցա, քանզի իբրև զբրախտ փափկութեան լի պտղով գտաւ երկիր առաջի նոցա. բայց առաւել ի դաւառն Մանանաղւոյն ի լեռն՝ որ կոչի Սմբատոյ բերդ. քանզի անդ ժողովեալ էին բազմութիւն անթիւ փախստէիցն, և անասուն որ ոչ գոյր թիւ: Յորոց վերայ հասեալ անօրինացն ապականեցին զամուրս նորս, և մտեալ ի ներքս՝ սուր ի վերայ եղեալ կոտորեցին զամենեսին:

Անդ էր տեսանել տեսութիւն ողորմելի և բազում ողբոց արժանի. զի գոմանս ի նոցանէ որ ի բուն անկանէին՝ սրամահ սպանէին. և որք յառապար տեղիս անկանէին և ամբանային, նետիւք խոցոտեալ սատակէին. և զբազումս յանձաւին վերայ ելեալք մեծամեծ վիմօք գլխարդ առնէին, որոց զիակունքն գլաթաւ ի վերայ միմեանց շեղջեալ իբրև զկոյտս փայտահարաց՝ զառաջիկայ զձորն ընուին: Վսյ և աւսղ շատ զան լուսոյ աւուրն այնորիկ. զի քաջն արքն վառեալ զինու

սրամտութեամբ եռացեալք, և վատքն թալկանային, կանացիք յիմարէին և երիտասարդք խիզախէին, այլ ելս իրանց ոչ կարէին իմանալ: Քանզի յամենայն կողմանց պատնէշ թշնամեացն պաշարեալ էր զնոսա. ոչ գոյր անդ սէր սիրելեաց և ոչ աւաղ բարեկամաց. մոռարաւ հայր զգութ որդոց, և մայր զսէր նորածին մանկանց: Ոչ կարէր յիշել անդ կին նորահարսն զսէրն փեսայի, և ոչ զմտաւ ածէր այր զգեղ ցանկալի ամուսնոյն իւրոյ. պակասեցան երգք պաշտօնէից, և հատան ձայնք սաղմոսաց ի շրթանց սաղմոսողաց. կալաւ առ հասարակ զամենեսեան զողուսն և երկիւղ: Եւ ի սաստիկ տագնապէն, բազում կանայք յղի գոլով՝ վիժէին զմանկունս. և այսպիսօրէն գործով՝ իբր վարմաւ որսորդաց թախարդեալ էին զլեռոն ամենայն մինչև լքան և հատան ի զօրութենէ...

ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՅԻ

Ո Ղ Բ Ե Ր Գ Ո Ւ Թ Ի Ը Ն

Ի խորոց սրտից խօսք ընդ Աստուծոյ:

Ձայն հառաչանաց հեծութեան սրտի՝ ողբոց աղաղակի քեզ վերընծայեմ, տեսող զազանեաց. և մատուցեալ եղեալ ի հուր թախճութեան անձին տոչորման՝ զպտուղ ըղձից ճենճերոյ սասանեալ մտացս բուրվառաւ կամացս առաքել առ քեզ: Այլ հոտոտեսցիս հայեսցիս, գթած, քան ի պատարազն բոլորապտուղ մատուցեալ ծխոյն բարդութեան: Ընկալ զսակաւամանեայ բանիցս յօղուած քեզ ի հաճութիւն, և մի ի բարկութիւն. ելցէ ի խորոց աստի զգայութեանց խորհրդակիր սենեկիս՝ վաղվաղակի ժամանել առ քեզ՝ կամաւորական

նուէր բանական գոհիս, ողջակիզեալ զօրութեամբ ճարպոյ՝ որ յիան է պարարութիւնս: Եւ ի դնելս իմ ընդ քեզ դատ խառնեալ աղերսիւ, հզօր, մի իբրև զհամբարձումն ձեռաց ամպարշտեալն Յակոբու, ըստ բողոքելոյն Նասյեայ, և զանխրաութիւն բաբելոնի՝ տաղտկալի քեզ երևեսցի. զոր առակ եւթանասներորդի երկրորդի սաղմոսին ազգէ. այլ իբր զբուրեալ խունկն հաճոյական ի խորանին Սելովայ, զոր Դաւիթն կանգնեալ նորոգեաց տապանակին հանգստեան ի գերութենէն դարձելոյ, որ ի վերստին գիւտ կորուսեալս հոգւոյ առակի, ընդունելի կամաց քո լիցի...

Տէր իմ տէր, տուիչ պարգևաց, ինքնարուն բարի, ամենից տիրող հաւասարապէս, միայն արարիչ զընաւս յոչէից, փառաւորեալ, անքնին, ահեղ, ահարկու, սոսկալի, հզօր, սաստիկ, անտանելի, ամերձենալի, անըմբռնելի, անիմանալի, անճառելի, անտեսանելի, անզննելի, անշօշափելի, անորոնելի, անսկիզբ, անժամանակ, անշամանդաղ գիտութիւն, աներկևան տեսութիւն, ճշմարիտ էականութիւն, բարձր և խոնարհ, օրհնաբանեալ գոյութիւն, անսուեր ծագումն, ամենափայլ ճառագայթ, խոստովանեալ լոյս, անտարակոյս վստահութիւն, անտարտամ հանգիստ, անյեղի կնիք, անսահմանելի տեսիլ, վկայեալ անուն, ճաշակ քաղցրութեան, բաժակ բերկրութեան, հաստիչ հոգւոց հաց, օտար մթութեանց սէր, աներկբայ խոստումն, ծածկոյթ ցանկալի, զգեստ անկապուտ, օթոց բաղձալի, զարդ փառաց, ձեռընկալու մեծ, ապաւէն գովեալ, աննւագելի գանձ, անապական անձրև, արփիացնցուղ ցօղ, ամենատեղաց զեղ, ձրի բժկութիւն, կրկնաձիր առողջութիւն, վեհագոյն խրախոյս, անպատիր կոչումն, համօրէն աւետիս, ստրկամեծար թագաւոր, աղքատասէր

պաշտպան, մշտահարուստ տուիչ, անխափան դիմեցումն, աննահանջելի հրաման, անհամառօտ յոյս, երկար տեսողութիւն, անզղջական տուր, ամենաբաշխ աջ, արդարակշիռ ձեռն, անաշառատես ակն, մխիթարութեան ձայն, սփոփանաց լուր, բերկրութեան բերումն, անուն կենդանի, նախախնամող մատն, անգայթակղելի ելք, անխարդախ ընթացք, կենդանարար կամք, աննենգելի խրատ, աննախանձ պատիւ, լայնական հնարք, անձնական պայման, անգտանելի հետք, աներևոյթ շաւիղ, անչափագիր պատկեր, որքանութիւն անսահման, աննմանական տիպ, անզուգական գութ, ողորմութիւն բազմագեղ, խոնարհութիւն տօնելի, համբոյր փրկական...

ՆԵՐՍԷՍ ՇՆՈՐՀԱԼԻ

Հ ա ն ե լ ու կ ն եր ի ց

Պանդոկ մի կայր վերայ երկրի  
 Ի յանցաւորի ճանապարհի.  
 Որ անձանօթքն ի նմա գային,  
 Եւ ծանօթքն զընային:  
 Մինչ հիւրըն գայր՝ մեծարէին,  
 Ոչ թէ մասն ինչ իրս առնուին,  
 Այլ զբովանդակըն խըլէին: (Աշխարհ)

Տուն մի տեսի սպիտակ փրօած,  
 Ու սև հաւեր ի ներս թառած,  
 Զուս ածէին ցեղք ի ցեղաց,  
 Լեզուաւ խօսին բանականաց: (Գիրք)

Զարմանք ասեմ քեզ սիրելի,  
 Կին մի ծընաւ գըրուզ որդի,  
 Տըղայն ունի ալիք ծերի.  
 Երբ ծերանայ դառնայ սեխ: (Պաղոզ)

Մեռանիմ և մահանամ,  
 Դարձեալ յառնեմ կենդանանամ.  
 Զաչս ի յերկինքս համբառնամ,  
 Բազմաստեղօք պայծառանամ: (Յորեն)

### ՄԽԻԹԱՐ ԳՈՇ

#### Դ ա տ ա ս տ ա ն ա գ ը ը ի յ

...Իսկ զհարկս գաւառաց և ազգաց թագաւորք և իշխանք արդարութեամբ առցեն. մի՞նչ անելի քան զառաջնոցն սովորութիւնս կալցին, զի ընդ ամենայնի համարս ունին տալ. զի յԱստուծոյ կարգեցան ի պահպանութիւն և փրկութիւն աշխարհի և ոչ ի կործանումն: Եւ արդ՝ այսպէս լիցի: Զանդաստանցն զհինգերորդ մասն առցեն, որպէս Յովսէփ օրինազրեաց յԵգիպտոս, զի յորժամ ստացաւ զերկիրն Փարաւոնի, յայնժամ զհինգերորդն կարգեաց. յայտ է զի նախ ինքեանց էր ժառանգութիւն և ոչ էր հինգերորդ, այլ հայրենի կտուր սակաւ: Սոյնպէս և այժմ լիցի. զի արծաթագին անդաստան և բուրաստան մի լիցի ընդ հարկաւ հնգեկի, նմանապէս և ջրաղաց և տուն և խանութ: Այլ թէ բնակիչքն ընդ արուեստի և կամ ընդ վաճառի հարկիցին, զի ոչ ի հարկէ գլխոյ քրիստոնէից, բայց այլազգաց՝ յորժամ բռնի ընդ հարկաւ արասցեն: Բայց անդաստանք ջրարբիք՝ լիցին ընդ հնգեկաւ, այլ ոստինք

տասանորդեցին. զի հող միայն է թագաւորի և իշխանի, և ոչ ջուր. սոյնպէս ոստինք, այգիք և ծառաստանք:

Այսպէս և յաւուրս շարաթու յեօթնէ մին գործիցի իշխանին և տէրունի. այլ աւելի աշխատելն զձեռամբ անկեալն անիրաւութիւն մեծ է:

Եզին առանձինն այլ հարկ մի լիցի, զի այն իսկ է զոր աշխատեալ հնգեկի:

Կովու լիար եղն միայն լիցի:

Արօտի այլ հարկ մի լիցի, զի այն իսկ են արօտականք որ հարկին:

Ոչխարք ի գառինսն տասանորդեցին. թէ յաճոյ իցէ տէրունեացն՝ ընդ ոչխարի փոխանակիցէ ըստ արժանւոյն:

Զիոյ և ջորւոյ և իշոյ մի լիցի հարկ, զի նոքօք բազում անգամ ծառայէ գտէրունիսն:

Ի տարեմուտս ըստ կարի ծառայեսցէ և յաւուրս տօնից: Մի լիցի չէքուչէք բազում այլ չիք լիցին անիրաւ սովորութիւնքն, զի և սահմանք բազում և յաւելորդ սովորութեանց եղև:

Առանց դատաստանի մի տուգանեսցի, այլ ըստ կարի լիցի թէ յանցաւորի ի տէրունիսն գացի իսկ յայլս յանցաւոր գտեալ դատաւորօք վճարեսցի:

Անդաստան է իշխանաց հարկել զհաւատացեալս, զոր հարկեն այլազգիք. զի այլազգեաց հարկ արժան է և ոչ ի նոցունց, որպէս և առնեն Վիրք ընդ ձեռամբ անկելոցն:

Թագաւոր իշխանի տուեալ գաւառ՝ եթէ շինէ ըստ հրամանի նորա բերդ և կամ աւան և կամ աւերակս ի նոյն սահմանսն ի ժառանգութիւնս համարեսցի նմա. մի լիցի փոխել առանց մեծի և իրաւացի յանցանաց. և զկնի մահու նոցա՝ որդւոց նոցա լիցի հրամանաւ թագաւորի: Սոյնպէս ընդ ձեռամբ իշխանաց ազատք

լիցին և ընդ ազատաց ձեռամբ շինականք. յորժամ աւերա շինեսցեն և հողս հատանիցեն ի մայրաց, ստացուած լիցի անփոփոխ և որդոց նոցա յետ մահու. այլ փոփոխումն ի վերայ մեծի յանցանաց և իրաւացի լիցի, և մի պատճառս զըպարտութեան փոփոխեցին: Նոր շինեալ տեղեաց ազատութիւն լիցի մինչ զի ամենայնիւ հաստատիցի:

Ի շինուածս քաղաքի և բերդի եթէ պակասիցէ գանձ արքունի, ամենեքեան հասարակ վճարիցեն:

Արք քաղաքացիք առաւել քան զգեղջուկս պատուիցին և գեղջկաց նմանապէս առաւել պատիւ լիցի քան բնակչաց ազարակի. սոյնպէս լիցի բերդի բնակչաց և աւանի, զի և կարգ առաջնոցն է մերոց թագաւորացն այդոքիկ:

Հարկաւորք և օգտակարք յարուեստս հողագործութիւն է և դարբնութիւն և հիւանութիւն, և բազմաց է հողագործել. առաւել պատուիցի երկաթագործ և փայտագործ: Իսկ օգնական բնութեանս մարմնոյ և հարկաւոր յարուեստս է բանական է բժշկութիւն. պատուիցի և սա: Եւ թէպէտ ամենայն կարծեալքն նուազունք—յոյժ հարկաւորք (են), այլ որոց սակաւ գիւտն է, յարքունուստ—առաւել ի պէտս հասարակաց պատուիցին: Սակայն պիտանի և հարկաւոր ի բանական արուեստս և փրկական՝ վարդապետութիւն է, նախապատիւ լիցի յիշխանս և յարքունիս զի հասարակաց հայր և բժիշկ հոգւոց...

### ՍՄԲԱՏ ՊԱՏՄԻՉ

Յ ի լ ի պ և չ և թ ու մ

Ի թուին ոհե (1226) ժողովեցան տէր Կոստանդին կաթողիկոս և եպիսկոպոսք և իշխանքն ի Տար-

սուս, և դրին թաղաւոր յորդեանցն պարոն Կոստանդեայ զպատանին Հեթում, և տուին իւր կին զգուստը թագաւորին Լևոնի Չապէլ: Եւ եղև ուրախութիւն Հայոց. և եղին մեծ սէր ընդ Հոռմայ Պապն, և ընդ Ալամնաց Օնրբունն. և ընդ Ալատին Սուլտանն Հոռմաց: Եւ յաւուրքըս այս շարժեցաւ դիւական բարկութիւն ի թագուհին Չապէլ, և ուզեց երթալ տեսնուլ զիւր մայրն յԱսպիթլուն բերդն ի Սելեկիա, և գնաց. և խոռովեցաւ ընդ թագաւորն և ընդ ամէն Հայք: Նա պարոն Կոստանդին ժողովեց հեծել, ու գնաց իջաւ առաջի Սելեկիոյ. նա ոսպիթալն վանց որ շատ կու ծախուէր զինքն Սելեկիայ, ու կու վախին ի յԱլատին Սուլտանէն, նա ուզեց տալ զբերդն թագուհուին ու սէր ունենալ ընդ հայք: Եւ Ֆրէբեր դրանն այս կերպովս ետ, և ասէ՛ թէ «զբերդս Լևոն թագաւորն ետ մեզ. մեք չկարեմք ասել ընդ իւր դատերն՝ թէ ել ի բերդէս. ապա մեք կու ելնենք, դուք առէք զբերդն ու զինք»: Եւ այս ցեղ առին զՍելեկայու զթագուհին...

### ԱՌԱՔԵԼ ԴԱԻՐԻԺԵՑԻ

Շահ-Արբասի՛ հայերին զաղթեցնելը

...Եւ իբրև եհաս ի գաւառն Շիրակվանայ, և ընդ բազում համբաւոյ գալոյ Ջղալօղլուոյն, զոր հանապազ բերէին զնացեալ լրտեսքն, անդէն եկին այլ ևս լըրտեսք՝ և բերին ստոյգ համբաւ թէ, ահաւասիկ եկեալ Ջղալօղլին եմուտ ի գաւառն Կարնոյ՝ որ է Արզրում: Իբրև լուաւ շահն զայս համբաւ, դարձոյց զերեսս իւր՝ և եկն յերուանգակերտն հին, որ այժմ ասի Աղջաղալայ:

Եւ զոր ի վաղ ժամանակաց ունէր ի մտի զքշելն

ազգին քրիստոնէից՝ և զաւերելն աշխարհին Հայոց՝ անդ յայտնեաց խորհրդակցաց իւրոց: Քանզի գիտէր ի միտս իւր՝ թէ ոչ կարէ պատերազմաւ զդձմ ունիլ Սինան փաշային՝ այսինքն Ջղալօղլի Սարդարին. վասն որոյ հրամայեաց զամենայն բնակիչս աշխարհին Հայոց, եթէ քրիստոնեայ, եթէ հրէայ, եթէ մահմետական, քշիլ յաշխարհն Պարսից: Զի եկեալ Օսմանցւոցն անբնակ Կտանիցին զերկիրն ի մարդկանէ: Եւ ոչ գտցի կերակուր և ոռճիկ և այլ ինչ պիտոյք նոցա՝ և անասնոց նոցա, և առ ի չգոյէ հարկաւորաց վտանգեցիւն զօրքն Օսմանցւոց: Նաև տարեալ ժողովուրդքն լինիցին նմա անդերծանելի հարկատուք՝ ծառայք և հողագործք մինչև ցյաւիտեան: Եւ նա մինչ ի վարանս խորհրդոց կայր, լաւ թէ Ջղալօղլին ել ի կարնոյ. յայնժամ կոչեաց առաջի իւր զմեծամեծս երկրին Հայոց՝ և զինքն կեղծաւորաբար ցաւակից ցուցանելով ազգին Հայոց, ասէր ընդ մեծամեծս և ընդ աւագսն Հայոց. Լուաք թէ եկեալ է Ջղալօղլին՝ և ահաւասիկ զայ մտանէ յերկիրս ձեր անհուն զօրօք: Նաև ի մերս կողմանէս անթիւ են զօրք. և գիտէք, զի բազումք գոն ի սոսս յերկոսին կողմանս յայսպիսում ժամանակի արք դառնացողք հողով ելուզակք, և աւագակք, և սրիկայք, և զորոց ոչ գիտեմք զո՞վ և զուստին. գուցէ ոմանք ի նոցունց որք անփոյթ արարեալ իցեն զկեան իւրեանց՝ և զհրամանեաց իշխանաց, յանկարծակի ի վերայ բախեալ հարկանիցն զմասն ինչ երկրի՝ և զժողովրդեան ձերոյ՝ կամ ստացուածոց՝ կամ ընտանեաց, աւարուսն արարեալ ի բաց ճողոպրիցին, և լինիցի ժողովուրդն ձեր ի կորուստ և ի գերութիւն: Վասն որոյ ողորմեալ ձեզ՝ հնարիմ փրկել զձեզ այսու կերպիւ. զի գաւառականք՝ և բնակիչք երկրի ձերոյ ելեալք ի տեղեաց իւրեանց սակաւ ինչ յառաջ խաղացեալ գնասցեն

աւուրց ինչ ճանապարհ, և մեք աստէն զդձմ կալեալ պատերազմիմք ընդ Օսմանցիսն. և եթէ մեզ տացէ Տէր, յայնժամ դառնայք ի տեղիս ձեր՝ և լինիք մեզ ի ժողովուրդք, և եթէ նոցա տացէ Տէր, մեք զանց արարեալ գնամք, և դուք դառնայք ի տեղիս ձեր՝ և լինիք նոցա ի ժողովուրդք: Զայս իբրև ասաց շահն ընդ աւագանիսն Հայոց՝ որոց զլիաւորի անուսն էր Տէր Յովանէս՝ որ պերճական մակադրութեամբ անւանէին աղայ տէր-տէր: Եւ նորա ծանեան զգաւաճանեալ նենգութիւն, և ոչ հաճեցան ի բանս նորա, այլ պատճառելով պատճառս, մատուցեալ առ նախարարս շահին ասացին: Ահա ժամանակս աշուն է. քանզի հետ տօնի սրբոյ խաչին էր, յորժամ քշեցին զերկիրն՝ ամենայն բնակիչկք երկրիս շունին պատրաստութիւն ճանապարհիս գրաստ և այլ բեռնակիր, առ ի բառնալ զստացուածս և զմանկուսս: Իսկ ձերքն և մատաղ մանկտիք ոչ կարեն գնալ: Վասն որոյ խնդրեմք յարքայէ այժմ ներել մեզ. այլ զայդ հրաման յաջողելովն Սասունձոյ, ի գարունն կատարեսցուք. զայս ասէին, զի թերևս անցցէ ժամն ի նոցանէ:

Իսկ աւերիչն աշխարհաց՝ և վատնիչն քրիստոնեայ ազանց՝ բնակարանն Նեսարայ՝ թագաւորն Շահաբաս ոչ անսաց բանից Հայոց: Այլ կոչեաց զնախարարս իւր առաջի իւր, և կարգեաց ի նոցանէ վերակացուս՝ և վարիչս բնակչաց երկրին, իւրաքանչիւր գաւառաց՝ իւրաքանչիւր իշխան իւրովք զօրօք վարող և քշող ժողովրդեանն:

Եւ զԱմիրզունայ խանն՝ յատուկ քաղաքին Երևանայ և երկրին Արարատու, և նորին մերձակայ մասնաւոր գաւառացն: Եւ հրամայեաց նոցա շահն, ուր և կարացեն ձեռն արկել, արտասահման արարեալ վարեսցին, և ոչ թողուցուն ամենեկին շունչ կենդանի, եթէ քրիստոնեայ և թէ մահմետական, զհաւանեալսն բանիւ,

և զոչ հաւանեալսն և զստունգանողսն հրամանաց թագաւորին, որով՝ և մահուամբ՝ և գերութեամբ:

Եւ զօրպպետացն՝ յետ ընդունելոյ զայսպիսի զաշխարհակործան և զաստիկ հրաման ի թագաւորէն, ելեալ իւրաքանչիւր զօրավար իւրով գնդաւն՝ դիմեցին յիւրաքանչիւր հրամայեալ գաւառսն աշխարհիս Հայոց, և իբրև հողմնախառն հուր ընդ եղէզն ընթացեալ, հապճեպ տագնապաւ վաղվաղակի զամենայն բնակիչս գաւառացն կորցեալք յիւրաքանչիւր բնակութեանց, և արտասահման արարեալ յիւրաքանչիւր տեղեաց, իբրև զՆորիւս բազմութեան հօտից և անդէոց զառաջեաւ արարեալ՝ բռնութեամբ վարեալ՝ ամեալ բերեալ հասուցին ի գաւառն Արարատու, և զլայնանիստ դաշտն նորացին ծագէ ի ծագ. քանզի ի ստորոտէ լեռանցն Գառնուոյ մինչ ի յեզրն Երասխայ մեծի գետոյն, լայնութիւնս էր բանակին. իսկ զերկայնութիւնս զովիմբ կըշռեաց զու, բայց ես ասեմ աւուր միոյ ճանապարհ, և յայլուր տեսի՝ որ հինգ աւուր ճանապարհ էին գրեալ. եւ էր նոր փոխեալ թւականն Հայոց և մտեալ ի ՌԾԳ. յառաջնում ամսեանն Հայոց Նաւասարդի, որ քշեցին զերկիրն: Եւ Պարսիկ զօրքն, որք գնացին ի քշել զերկիրն, ուստի և հանեալ զժողովուրդսն քշէին, եթէ ի գեղօրէից և թէ ի քաղաքաց, զամենայն շէսս, զտունս և զբնակութիւնս հուրբ արեալ ախնայաբար հրկէզ առնէին: Այլև զհամբարս խոտոյ և զյարդի՝ զցորենոյ և զգարուոյ և այլ պիտոյց, զամենայն այրեալ վատնէին: Այսպէս աւերեալ թափուր արարին զաշխարհն վասն զօրացն Օսմանցւոց՝ զի մի մնացէ ինչ ոռճիկ նոցա, և վտանգեսցին նոքա: Այլև ելեալ ժողովուրդքն զայն տեսեալ սրտակտուրք լիցին, և մի դարձցին յետս:

Արդ՝ զօրքն Պարսից որք կարգեցան վարիչք ժողովրդեանն, մինչ վարեալ զժողովուրդսն բերեալ հա-

սուցին ի դաշտն Էջմիածնի, Շահաբասն ի յԱղշաղալէն էր. և Սարդարն Օսմանցւոց Զղալօղլին իւրովք զօրքն եհաս ի Կարս: Եւ Շահաբասն գիտէր, որ ոչ կարէր դէմ յանդիման պատերազմաւ դիմակայիլ Օսմանցւոցն, զանգիտեալ ի բազմութենէ նոցա, վասն որոյ դարձուցեալ զերեսս իւր չուեաց ամենայն բանակաւն իւրով՝ հետեալ գնեալ բանակի ժողովրդեանն դէպ յերկիրն Պարսից: Նաև զօրք Օսմանցւոց չու արարեալ հետեւեցան զկնի բանակին Պարսից: Եւ եղեն բանակք մեծամեծք և անհունք. առաջին՝ բանակն ժողովրդեանն՝ երկրորդն՝ բանակն Պարսից, Երրորդն՝ բանակն Օսմանցւոց: Եւ այնպէս դիպեցաւ պատահումն՝ զի յորժամ չուէր բանակ ժողովրդեան, իջեալ բանակէր ի հանգըրուանս նոցա Շահաբասն զօրքն Պարսից. և ի չուելն նոցա բանակէր ի նոյն տեղին Զղալօղլին զօրքն Օսմանցւոց, և այսպէս գնեալ միմեանց կրկնակիս գնալով գնացին, մինչև հասին ժողովուրդքն ի գեղն Զուղայ, և Օսմանցիքն հասին ի Նախչուան: Եւ այնուհետև ոչ թսղացուցին Պարսիկքն ժողովրդեանն զկայ առնուլ՝ և ոչ ժամ մի, այլ կարի սաստիկ տագնապաւ նեղէին զժողովուրդն, զոմանս մահու հարւածով գանելով, և զոմանց զուռնչս և զականջս հատանելով, և զոմանց զգլուխն կտրեալ ի ձող ցցէին, որպէս զեղբայր Առաքել Կաթողիկոսին, որում անունն էր Յօհանջան, գորա և զայլոյ ումեմն առն զգլուխսն կտրեցին, և ի ձող ցցեցին յեզր գետոյն Երասխայ. զայստսիկ և առաւել քան զայստսիկ խոշտանգանս կտտանաց ամէին ի վերայ ժողովրդեանն, ի յան և յերկիւղ ժողովրդեան և տեսողացն, զի փութանակի անցցեն զգետն: Զայս ամենայն վտանգս ամէին ի վերայ ժողովրդեանն խորամանկ ազգն Պարսից յահէ Օսմանցւոց, որք զկնի նոցա գային, վասն զի հայէին Պարսիկքն ի բանակն ժո-

զովրդեանն զի անթիւք էին, նոյնպէս և յիւրեանց բանական հայէին, զի յովովք էին, և մինչ յանցանել աշտարայ անցանեն: Երկնչէին ի զօրացն Օսմանցուց, թէ մի գուցէ յայնքան աւուրան յանկարծակի բաղխեալ ի վերայ բանակին Պարսից բեկումն ինչ և վաս առնիցեն իւրեանց և կամ զժողովուրդն յափշտակեալ ի նոցանէ յետս դարձուցանիցեն, և չար առաջարկութեան նոցա խափանումն լիցի: Վասն որոյ տագնապաւ ստիպէին զժողովուրդն անցանել զգետն: Եւ ի բազմութենէն ոչ բաւէր նոցա նաւ կամ տուփ որով անցցեն զգետն, թէպէտ և յայլ տեղեաց այլ ևս նաւս բերին և անդէն ևս յորով տուփ շինեցին, սակայն բանակն ժողովրդեանն՝ և բանակն Պարսից յորովք էին, և տակաւին ոչ լինէր բաւական: Եւ ի զօրացն Պարսից՝ որք վարիչք էին կարգեալք ժողովրդականն, շրջապատեալ զժողովրդեամբն պահէին՝ զի մի ոք փախիցէ, այլ և փայտիւ գանեալ՝ հարեալ՝ բեկեալ՝ մղեալ ի գետ անդր ընուին, և այսպէս վտանգն և վիշտն սաստկանայր ի վերայ ժողովրդեանն:

Իսկ ողորմելի ժողովրդեանն հայէին յառաջ զանհուն գետն տեսանէին իբրև զժով՝ որ խեղդէր, և յետուստ զտուրն Պարսից՝ որ սպանանէր, և ճարակ փախչելոյ ոչ գտանիւր. և առհասարակ աղիողորմ ողբս, և յորդ արտասուս յաչաց հեղեալ առնէին երկրորդ Երասխ. և ձայն լալեաց, և հառաչանաց, ճչանաց, վայոց, կսկծանաց, մորմոքանաց ընդ միմեանս խառնեալ գոչեցուցանէին ուժգին աղաղակաւ, իսկ ողորմութիւն և փրկութիւն ոչ ուստեքէ էր:

Աստանօր կարի հարկիւ պիտոյ եղև մերում ժողովրդեանն հինն Մովսէս՝ և նորին աշակերտն Յեսուս առ ի փրկել զնորս Իսրայէլ ի ձեռանէ երկրորդիս Փա-

րաւօնի, և կամ դադարեցուցանել զուղիս յորդահոսան և լայնատարած դետոյն մեծի, և ոչ եղև գտեալ. քանզի յորդութիւնք մեղաց մերոց փակեցին ընդդէմ մեր զդուռն ողորմութեան գթածին Աստուծոյ:

Եւ անողորմ զօրացն Պարսից վարեալ զժողովուրդն ընուին ի գետն, և նոքա ի մէջ գետոյն ևս քան զևս բազմացուցանէին զձայն աղաղակին և զողբոցն ի վտանգէն: Եւ ոմանք ի նոցանէ կալեալ զեզերս նաւացն, և ոմանք զափոցն, և ոմանք զագիս ձիոց, և զեզանց, և զգոմշոց, և ոմանք իւրովի լողեալք անցանէին: Եւ որք անհմուտք էին լողելոյ և անզօրք, ծերք և պառաւունք, տղայք և աղջկունք, և մատաղ մանկտիք լցեալք էին յերեսս ջրոյն. և գետն առեալ տանէր զնոսա իբրև զխուր ի ժամանակս գարնանոյ. և գետատար մարդով ծածկեալ էր երեսն գետոյն, և թէպէտ անցին, որք անցինն, այլ բազումք այնք էին՝ որք հեղձամբ ջրոյն մեռան:

Եւ հեծեալք ոմանք ի զօրացն Պարսից՝ որք ունէին ուժեղ ձիս, և ինքեանք արք արի և կարող, շըրջելով ի մէջ քրիստոնէից տեսեալ նկատէին զուստերս և զզստերս քրիստոնէից, և որոց հաւանեալ սիրտք իւրեանց, եթէ կանանց, եթէ աղջկանց, և եթէ տղայոց. էր զի խաբէին զտեսարան, թէ տուր զի վասն քո անցուցից ընդ գետն յայնկոյս, և իբրև անցուցանէր, ոչ զնէր անդէն ի գետին, այլ առեալ երթայր յո՛ և կամէր: Եւ այլք զողութեամբ առեալ տանէին: Եւ այլք յափշտակութեամբ և սպանութեամբ առեալ ի տեսարցն տանէին: Եւ բազումք մարք զտղայս և տեսարք զհիւանդս ի ճանապարհին ընկեցիկ արարեալ լքեալ թողեալ զնային, վասն անհանդուրժելի և անըմբերելի վտանգին, որ ժամանեալ էր ի վերայ նոցա: Եւ միանգամայն ասեմ՝ զի թշուառութիւնք՝ և արհաւիրք ան-



տանելիք հասին ի վերայ ազգիս մերոյ, և ոչ բաւեալ թէ որով տարազու հիւսեցից որքս դամբանականս և աշխարհանաց ի վերայ բեկման հայկական սեռիս, որք այսքան չարակրութեանց եղեն ընդունակք: Ձի թէպէտ ըստ տարասի հոռոյն Իսրայէլի լինէին վարեալք գերի ձեռամբ երկրորդիս Բաբելացւոց, այլ ոչ գոյր Երեմիա, որ խրատէր, և ոչ Եզեկիէլ, որ լուսաւորէր, և ոչ Յեսու կամ Զորաբաբէլ՝ որ զդարձն առաջնորդէր, այլ եղեալ իբրև զհօտս անհովիւս ցրուեալք և հալածեալք առաջի գայլոց պատառողաց և զիշատող գաղանաց, որք վարէին բռնութեամբ: Եւ նոքա երթալով երթային, և լային, որք դարձեալ տանէին զսերմանս իւրեանց:

Իսկ յաջորդ սորին, ոչ եղև տեսանելի, որ ասէ, գալով եկեցեան, և ցնծասեն, վասն զի ոչ եկին և ոչ եղև ցնծութիւն, այլ անդէն մնացին ուր և տարեալ արգելին այսինքն, յաշխարհն Պարսից:

Եւ եղև զի ամենայն ժողովուրդն էանց զգետն, էանց ընդ նոսին խառն և բանակն Պարսից: Եւ մինչ ցայս վայր Ամիրգունայ խանն էր քշող ժողովրդեանն, և յայնմ վայրի Շահաբասն հրամայեաց նմա գնալ ընդ իւրում բանակին: Եւ կարգեաց վարող ժողովրդեանն զՍալիֆալու էլիազ սուլթանն, և հրամայեաց նմա փութով և ճեպով վարել զժողովուրդն՝ և հեռացուցանել ի զօրացն Օսմանցւոց՝ և հասուցանել յերկիրն Պարսից: Եւ ինքն շահն ամենայն բանակաւն Պարսից ընդ արքունի ճանապարհն, այսինք ընդ Չադահն յուղի անկեալ գնացին ի քաղաքն ի Թարվէզ, բայց զժողովուրդն ոչ ընդ նոյն արքունի ճանապարհ տարան ի Թարվէզ վասն երկիւղին Օսմանցւոց՝ զի մի գուցէ զկնի ժամանեալ յափշտակիցեն ի Պարսից: Այլ հրամայեաց շահն էլիազ սուլթանին, զի ընդ նեղ և նուրբ և ընդ զժուարին վայրս տարցէ՝ ընդ որ ոչ կարացեն գնալ

բանակն Օսմանցւոց զկնի նոցա: Եւ նա չուեցուցեալ զժողովուրդն տարաւ ընդ ճանապարհս ձորոյն՝ յորում գետն Երասխ գնայ զգնացս իւր, ընդ զժուարին ել և էջս լերանցն, և ձորոցն, և ընդ կածան տեղիսն: Եւ բազում տառապանօք և չարակրութեամբ անցին զժուարին վայրս լերանցն, և անցուցեալ զժողովուրդն զժուարին վայրօքն, տարան յերկիրն, որ ասի Թարումխալխալ, և Ահար, և Մուշկուն, և մի մերձակայ վայրս սոցա, և անդէն զետեղեցուցին զնոսա ամիսս ինչ վասն սաստկասառոյց և դառնաշունչ ցրտոյ ձմեռան՝ որոյ սակս ոչ կարէին գնալ:

Իսկ ի հասանիլ քաղցրաշունչ օդոյ գարնայնոյ, զայլ ոմն իշխան կարգեցին վարիչս ժողովրդեանն՝ որում անունն էր Աբուլթուրաբ բէկ, որ վերստին սկսաւ վարել ժողովուրդն մինչև տարեալ հասոյց ի քաղաքն Ապահանս: Եւ անդէն՝ որք քաղաքացիք էին, ի նմին քաղաքի զետեղեցուցեալ բնակեցուցին, և որք շինականք էին և զեղականք՝ ի շրջակայ գաւառն քաղաքին Սպահանու բնակեցուցին՝ ի Լնջան, և յԱլնջան, ի Գանդիման, և ի Ջղախոս, ի Փարիայ, և ի Բուրվարի, և անդէն բնակեցան, և կացին մինչև ցայսօր: Քանզի արքն հին, որք յաշխարհէն Հայոց էին գնացեալ և գիտէին զվայելչութիւն աշխարհին Հայոց, նոքա մեռան անդէն. և որք անդ ծնան, և սնան, և վարժեցան, նոյն աշխարհին և հաճեցան և ընդելացան, զի նովաւ վարժեցան. վասն որոյ անդէն կացին և մնացին մինչև ցայսօր...

## ՄԻՋՆԱԴԱՐԵԱՆ ԱՌԱԿՆԵՐ

(Հանած 1669 թւին տպւած «Աղւէսագրքից»)

1.

Որսորդ մի կալաւ զկաքաւ մի, և կամէր զենուլ և ասէ կաքաւն՝ մի սպանաներ զիս, զի ես խաբեցից զքաղուծս կաքաւս և առից յակնատս քո: Եւ ասէ որսորդն. և այժմ ստուգիւ մեռցիս ի ձեռաց իմոց: Զի զսիրելիս քո՝ և զազգականս մատնես ի մահ: Յուցանէ՛ թէ մի կաղմիր զորոգայթ սիրելւոյ, զի ոչ հաճի Աստուած ի գործս քո. և դարձեալ քեզ պատրաստէ զնա:

2.

Հարցին ընդ աղուէսն թէ քանի՛ ցեղ արուեստ գիտես. զնաց կկղեցաւ, և ասէ. հազար ցեղ արուեստ գիտեմ. երեսուն ազուլս առաջ շանն՝ թող թէ քանի՛ անձամբս: Բայց մեծ արուեստս այն է, որ ոչ ես զշունն տեսնուծ, և ոչ նա զիս: Յուցանէ, թէ անթիւք են, որ ապաշխարեն զմեզս և Աստծոյ լինին: Ապա նա է կատարեալ մարդ՝ որ ոչ մեղանչէ:

3.

Աղուէսն ու խեցգետինն եղեն եղբարք և արարին ցան, հնձեցին և կասեալ կուտեցին. Ասէ աղուէսն՝ ելցուք ի բլուրս այս և ով շուտ իջանէ, նա առնու զցորեանն: Յորժամ ելին, ասէ խեցգետինն. — արն ինձ սէր. և յորժամ կամիցիս վազել, զարկ զագիդ առաջի իմ, որ ես իմանամ և գամ զկնի քո: Եւ զարկ աղուէսն զագին և վազեաց, և խաչափառն փակաւ աղուէսուն և յորժամ եհաս աղուէսն ի շեղջն և դարձաւ յետս թէ յուր է խեցգետինն: Եւ խեցգետինն ի վայր անկաւ ի վրայ շեղջին և ասաց՝ անուն Աստծոյ, այս ինձ երեզ

մող և կէս: Զարմացաւ աղուէսն և ասէ. ով դու չար, երբ եկիր դու այսր: Յուցանէ՛ թէ բան և գործ առնեն նենգաւոր մարդիք, որ ի կորուստ լինի իւրեանց անձանց. և տկարք յաղթեն նոցա: Դարձեալ շատ մեղաւոր՝ այս տկար մարմնովս ջանայ. իմաստութեամբ և արտաւունք քաւէ զմեզս. և տէր լինի երկնից հացին:

4.

Ագուան ժողովեաց զձագս իւր և խրատէր զնոսս և ասէր. ով որդեակք, մի լրբիք. պատրաստ եղերուք ի մարդկանէ՛ յորժամ խոնարհին առնուլ ինչ: Ասին ձագեր նոցա. ով մայր մեր, զինչ արասցուք թէ առաջագոյն լինի մարդն առեալ զքարն ի ձեռն իւր. և ասէ մայրն՝ այժմ գիտեմ որ ապրելոց էք: Յուցանէ թէ պարտէ պատրաստիլ ի հին որոգայթիցն սատանայի, ի նորա պատրանացն և նենգութեանց նորա:

## ՎԱՐԴԱՆ ԱՅԳԵԿՑՈՒ ԱՌԱԿՆԵՐԻՑ

Եւ արդ եկեալ ժողովեցան ամենայն այժք ի միասին և գրեցին թուղթ առ ազգս զայլոց այսպէս: Առ խոհեմ և հզաւր յաղթող ազգս զայլոց որ աստուծով էք զաւրացեալ. գրեմք տկար և ողորմելի և անիմաստ ազգ այժիցս. երկիր պագեմք և ողջունեմք զմեծափառ թագաւորութիւնդ ձեր. և աղաչեմք որ ողորմիք մեզ և առնէք սէր և խաղաղութիւն: Որ բառնա ի միջոյ հայրէնի թշնամութիւն որպէս և առնեն թագաւորք ազգաց:

Եւ զայս ընթերցեալ ազգն զայլոց և ուրախացան ընդ բարի առաջարկութիւն. և գրեցին առ նոսս նամակ մի որ էր այսպէս: Առ ամենիմաստ և երջանիկ

աստուածասէր և հոգեհորոզ սուրբ ազգ այծիցդ զբեմք  
չարաբարոյ և մեղաւոր և լիբբ ազգս գայլոց. և մեծ  
փափաքանաւք ողջոյն առաքեմք ձեզ և գիտացնեմք ձեզ  
զի աստուածեղէն է խնդիրդ ձեր և բարեաց պատճառ:  
ապա լուեալ է մեր ի ծեր և հնագոյն հարցն մերոց զի  
շունն և հովիւն է պատճառ խոռովութեան ընդ մեզ և  
ընդ ձեզ: Եւ թէ բառնայք զնոսա ի միջոյ, մեք ուրա-  
խութեամբ կատարեմք զոր հրամայէք մեզ. և զայս  
ընթերցեալ այծքն, ի բայց վարեցին զհովիւն և ըզ-  
շունն, և առեալ թուղթ երգման և պոման սիրոյ զամս.  
խ. ելեալ այծքն յանհոգս. և սկսան արածել ի լերինս,  
և ի դաշտս ի հովանիս ծառոց և ի ցուրտ աղբերս բա-  
րէհամս. և համբերեցին գայլքն աւուրս. խ. և ժողո-  
վեալ ի վերայ սատակեցին զայծքն ամենայն և եղև  
խաղաղումն:

Արդ այծքն մեք եմք որդիք մարդկան. և գայլքն  
սատանա է դիւաւքն հանդերձ. հովիւն Քրիստոս է. և  
ամենայն սուրբք նորա. և շունն բարկոթիւն և սրտ-  
մտութիւն որ իմեզ կայ. և թուղթ սիրոյն և հաշտելն  
ընդ սատանա. մեղքն է զոր գործեմք, և ի գործել  
զմեղսն զՔրիստոս ի բայց վարեմք. և զմեղքն թուղթ  
առաքեմ առ սատանա, թէ հաշտեցաք ընդ քեզ. և կա-  
տարեցաք զկամս քո. և գան դեքն և սատակեն զհոգիս  
մեր ի մեղս և ոչ կարեմք իմանալ զայս ամենայն զի  
որ մեծ չար գործէ, նա մեծ թուղթ գրէ առ առ սա-  
տանա. և որ փոքր չար առնէ, նա փոքր թուղթ գրէ  
առ սատանա: Ահա որդեակք, իմացայք թէ որպէս հաշ-  
տին և խաղաղութիւն առնեն մեղաւորքն ընդ սատա-  
նա և ոչ կարեն իմանալ:

## III

## ՄԻՋՆԱԳԱՐԵԱՆ ԲԱՆԱՍՏԵՂԺՈՒԹԻՒՆ

ԿՈՍՏԱՆԴԻՆ ԵՐԶՆԿԱՑԻ

Բանք

Ահա ըսկիզբն առնում բանից  
և խրատ տամ հասարակաց.  
Իմաստութիւն ձեզ ցուցանէ  
յով որ հոգւոյ աչք կայ ի բաց:  
Զինչ մարգարիտ շարեալ յոսկի  
հանց գեղեցիկ բանն ի մտաց՝  
Բայց անգիտին ոչինչ թուի  
զինչ մարգարիտն ի մէջ խոզաց:  
Ով գիտութիւն ունի անբաւ  
ի մարդկանէ ինքն է գոլած.  
Ու սէր չունի իր հաւասար  
որ գիտութիւն հիմն է զըրած.  
Նայ զգիտութիւնն Աստուծային  
հըպարտ հոգով իսկի չգիտաց.  
Հանց տես թէ հիմն ի վերայ ջրոց  
կայ անհաստատ իրք մի շինած:

Յարքային Սողոմոնի

յիմաստութեան բանքն է գրած

Թէ նա: է մարդ կատարեալ

և իմաստուն ինքն է գոված՝

Ով ընդրէ զչարն ի բարոյն

՛ Լ ի սուրբ սրբոտէ սիրէ զԱստուած,

Նա նմա խի վայելէ

իմաստութեան դուռն ու խելաց:

Լըսէ քեզ բան խիստ գեղեցիկ

ձաղիկ քաղած է ի բազմաց:

Անմահութեան պրտուղն է սա

որ է յերկնից յաշխարհս իջած.

Թէ ըզնորա ճաշակն առնուս

կամ սէր ունիս ՛ Լ ես ծարաւած՝

Այլ չհաւնիս անցաւորիս

թողուս զամէն աշխարհս ի բաց:

Քանի հասնիս ի մեծութիւն

խոնարը կացիր մարդկան ու ցած,

Որչափ լինիս դու իմաստուն

չատ մի խօսել մէջ անգիտաց:

Աղքատին մի բարկանալ

որ չըդատէ ըզքեզ Աստուած.

Քո ընդերին հոր մի փոքել

թէ չէ այն քեզ կայ պատրաստած:

Ով իմաստուն է կամ գիտէ

աստուածային բան մ'ի խելաց՝

կամ ինքն սիրէ զմարդ իմաստուն

՛ Լ ի դատ կենայ ի յանգիտաց.

Նա անպիտոյն մարդ չհաւանի

յիմար և խե է նա գոված,

Զի աշխարհիս իմաստութիւնն

յիմարութիւն է առ Աստուած:

Ով երկրաւոր իմաստութեամբ

ինքն է գիտուն հաստատ ուսած՝

Նայ երկնաւոր իմաստութեանն

է անծանօթ և յիմարած.

Զի որ սիրէ զաշխարհըս զայս

ու զհետ երթայ անցաւորաց,

Նա թշնամի և հակառակ

է Աստուծոյ ու երկնաւորաց:

Տէրը վերին ի քէն խընդրեմ

զըթայ ի յիս հայր ողորմած

եւ բաշխէ անարժանիս

քո յերկնային մեծ պարգևաց.

Որ արբիմ շնորհօք Հոգոյն

կենամ սիրովն երկնաւորաց

եւ թողմ զայս անցաւորս

ես կոստանդինս ի մենէ ի բաց:

Բանք յերկու դէմս մտաց տեսութիւնք ի հոգի և ի  
մարմին. զոր առակօք խօսի այսպէս:

Զարթիք ի յերազուտ,

բացէք զաչերտ ով կայք ի քուն.

Տեսէք մէջ գիշերիս

չատք՝ որ պահ մի չեն լել ի քուն.

Անգաղար ի շուրջ գալով

կան հրամանաւ մի Աստուծուն,

Որ բանիւ գերկինք ի վեր

կամար կապել՝ երես քամուն:

Զարթայ ես ի քընոյս

ելայ կացի պահ մի արթուն.

Երբ էանց գիշերն յերկար՝  
նըշան եղև առաւօտուն.

Տեսն լուսին պայծառ,  
բազում աստեղք ի յիր սպասուն.

Ձերկինք են զարդարել  
'ւ են արարածքը Իմաստնոյն:

Մի աստղ ելաւ պայծառ  
առջև Արուսեկին լուսոյն,

Ունէր լոյս գեղեցիկ  
քան զաստեղացն այլ գերագոյն.

Ետես ըզնա լուսին  
և հրբաման տայ աստեղնոյն.

Հաւսար ի մայր մըտան  
նուագեցան յիրենց լուսոյն:

Ձերեսս երկնից եբաց՝  
երբոր ծագեց լոյսն արևուն.

Տըղայ երևեցաւ,  
քաղցրը կոչի իրենն անուն:

Հոգի հաւսար երես շատոց  
պայծառ լոյս աչերուն,

Ով սիրով մընաց լուսոյն  
Արուսեկին առաւօտուն:

Քաղցր է ծընունդ լուսոյն,  
երանի տամ ես այն մարդոյն՝

Որ բաժին ինքն ունենայ  
ի լայն լուսոյն առաւօտուն:

Թէ դուռն կայ երկնից  
պարգևատու մի Աստուծուն՝

Ի ծագել արեգականն  
ի մեզ բացւի դուռն բարոյն:

Թէ Տէրն ի յարարածքս  
հայի քաղցր ի յիր սիրուն՝

Յայն պահուն է որ լինի  
նըշան լուսոյն առաւօտուն.

Թէ լըսէ աղաչանաց  
և աղօթից շատ կարգալուն՝

Ով խընդրէ թէզ զըտանիլ  
զպարգևքն՝ առնու առաւօտուն:

Թէ անուշ հոտ կայ բուրել  
'ւ ի կեանս փոխէ զդուռն մահուն,

Են շատոց հոգի հարբած  
յանուշ հոտոյն յառաւօտուն.

Թէ անմահական սէր կայ՝  
որ հոգի տայ հոգեստնուն,

Իմ բաժին սէրն ու հոգին  
խառնել ի սէրն առաւօտուն:

Թէ ինձ կեանք կամ խնդութիւն  
բաժին կայ ի դուռն ի սիրուն,

Մէկ պահու սէրն ի սըրտէ՝  
թող լինի ինձ յառաւօտուն.

Թէ հոգի տալ կու պիտի,  
կամ թէ հոգի հանել մարդուն,

Նայ յօժար եմ ես հոգով  
զհոգիս փոխան տալ իմ սիրուն:

Ով կամի սիրով լինիլ  
ինքն յարութեան որդի լուսոյն՝

Թող խընդրէ ի յայն Միրոյն  
որ ինք յարեաւ առաւօտուն.

Ի սիրուն սէր յաւելու  
սիրով զընալ տունն ի Սիրուն.

Ի ով Միրոյն ինք հեակի՝  
հասնի սիրովն առաւօտուն:

Տէր, գըթն յիս ի ծառայս,  
և տուր բաժին ինձ յայն հոգոյն.

Որ շատոք ին ցանգացել  
բայց քիչք հասան առաւօտուն:  
Ես յետին և անպիտան  
որ Կոստանդին կոչի անուն  
Սընդրեմ ի քէն, տուր ինձ  
սէր ի սիրուն առաւօտուն:

Բանք յաղագս Արեգականն Արդարութեան, որ և ծա-  
գեաց ի Հօրէ Միածին Որդի Քրիստոս, զոր առակօք  
խօսի:

Ահա գիշեր էանց,  
նըշան եղե առաւօտուն.  
Աստղըն պայծառ ծագեց,  
աւետաւոր երեկ լուսոյն.  
Սաւարըն հերքեցաւ  
ու ցընծացաւ աշխարհքս ամէն,  
Երնեկ ետուն միմեանց՝  
որ արժանի եղեն լուսոյն:  
Զինչ որ ի բանդ կային  
և ի Սաւար ի խոր զընդան՝  
Նա լոյս ծագեց նոցա  
յարեգականն ի մեծ լուսոյն.  
Երկիրս է սառն ու պաղ  
ու ցուրտ ձրմեռն ու հողմային,  
Ահա եղև գարուն  
յարեգականն ի մեծ լուսոյն:  
Երկիր կենդանացաւ  
ու լեռն ու դաշտ կանաչ բուսան,  
Ծաղիկ բերին ծառերն  
յարեգականն ի մեծ լուսոյն.

Ծաղկունքըն զարգարին  
ազգի ազգի գոյնըզգոյնով,  
Փռոի վարդըն կարմիր  
յարեգականն ի մեծ լուսոյն:  
Ակունքըտ յորդորին  
ու ցընծալով յառաջ խաղան,  
Գետերտ ոլոր կապին  
յարեգականն ի մեծ լուսոյն:  
Զինչ որ կայ արարած  
ու անհոգի մեռած կային,  
Ահա կենդանացան  
յարեգականն ի մեծ լուսոյն:  
Է՞ր չէք ի զարմանալ,  
ու կամ հարցուկ լինիլ բանիս,  
Վասն այս արեգականս  
ու իր պայծառ լըցեալ լուսոյն.  
Այս նոր ծագեց մեզ լոյս  
քան զարեգակն ու այլ պայծառ,  
Զինչ լուսաւորք կային՝  
ծառայ կոչին այն մեծ լուսոյն:  
Ի լուսոյն ի սկզբանէ  
լի լուսով շառաւեղ ծագեց,  
Լոյս ի լուսոյ ծընաւ  
յարեգականն ի մեծ լուսոյն:  
Այս լոյսս ի յայն լուսոյն՝  
որ ինքն է սէր ամէն լուսոյն,  
Որ թագաւոր կոչի  
'ւ ամենուն լոյսն ի յիր լուսոյն:  
Երկնից կամար եղև  
ի զարմանալ արեգականն,  
Զի չէր տեսել հանց լոյս  
կամ արեգակն ի յայն լուսոյն.

Երկիրըս ցընծացաւ  
մեծ աւետօք ուրախացաւ,  
Թէ անմուտ ծագեց մեծ լոյս  
ու արեգակն ի յայն լուսոյն:  
Ոմանք են անհոգի  
աչերով կուր և անյիմայ,  
Որ չեն ի հաւատալ  
արեգական ու իր լուսոյն:  
Պաւար կենօք կենան  
ու զբաղին յերազ քընոյ,  
Չունին մասըն լուսոյ  
յարեգականն ի մեծ լուսոյն:

Ես չեմ ի հաւատալ  
այն սուտ հոգոյն թէ ինքըն լոյս՝  
Որ չունի (ի) շառուեղ  
յարեգական ի մեծ լուսոյն:  
Ես Կոստանդին որ զըրեցի  
կու փափագիմ ի յայն լուսոյն՝  
Որ ես լուսաւորիմ  
յարեգականն ի մեծ լուսոյն:

Բանք խօսիլ ի ժամ տրամութեան

Ես քանի՜ հառաչ բերեմ  
կամ ի սըրտէ կենամ ազար,  
Եւ յերակ զօրն ի դուսայ  
հոգօք մաշեմ զիս անդադար.  
Ես չունիմ հանգըստութիւն  
'ւ ուրախութեան ինձ չըկայ ճար,  
Որ մի պահ հանգիստ առնու՞մ  
կամ դուրանայ կեանքըս զըժար:

Ձերդ ի ծով կամ տատանել,  
յերակ ծըփեմ յալիս խաւար,  
Եւ չըկայ եզր ի ծովիս՝  
կամ թէ ճամբուս թէզ կայ վըճար.  
Ոչ ունիմ ես օգնական  
յոյս 'ւ ապաւէն ինձ կամ եար՝  
Որ ի յայս շատ ցընորէս  
լինէր խօսք մարդ սիրելի  
Ոչ ունիմ մարդ սիրելի  
ի (յընտանեաց) ինձ կամ օտար,  
Որ զըթայ սըրտօջի ի յիս՝  
կամ աղետայ զիս իր եղբայր.  
Ով սրտով էր սիրելի՝  
եղաւ հեռի յիսնէ 'ւ օտար.  
Նա օտարին ի՞նչ մեղ գնեմ  
երբոր լինիմ յիբմէն ազար:  
Ձայս ի յի՞վ հարցուկ լինիմ՝  
որ ինձ խըրատ տար կամ կար,  
Թէ զիս էր աշխարհս ամէն  
հանց կու ատեն թըշնամարար:  
Ձով սիրով ես ընդունիմ՝  
թէ ի սըրտէ ինձ տայ խապար,  
հայ յետև ինք յերեսաց  
ցուցնէ զգիր սէրն անկատար:  
է՛ գերի սիրտ՝ լի արեամբ,  
քանի՞ կենաս հըրովտ ի վառ.  
Կամ վանց այս սուտ կենցաղոյս  
քանի՞ կենաս դուն թըւաբար:  
Թէզ զարթիր դու ի քընոյս.  
հանց ի յերագտ էր յուսացար.  
Եւ թափէ զարբեցութիւնդ  
և տար զհոգւոյտ կամքն ի կատար:

Է՞ր դաֆիւ կաս յաշխարհիս  
 'ւ անհոգ ի ժուռ գաս կամկար,  
 Ի յուտել շատ 'ւ ի խըմել  
 սիրել խընդալ սրտով յօժար.  
 Ոչ յիշես զմահն ի մօտիկ  
 որ գերդ ըզգող ըզմարդն որսար.  
 Եւ զալիֆ հանց հասանէ  
 վերայ մարդուն՝ որ չըկայ ճար,  
 Գայ գըտնու հարբած ի քուն՝  
 և զքեզ գերէ ինք գերելար,  
 Եւ ոչ տայ մի պահ քեզ թոյլ  
 կամ ընդունի ոսկի կաշառ.  
 Ոչ եղբայր սիրուն մըռէ,  
 ոչ սիրելի և կամ օտար.  
 Կամ թէ այն քեզ գայ ի դէմ  
 որ դու սրբտովտ յինք հաճեցար:  
 Կոտանդի՛ն, իմ խրատիս  
 հաւան կացիր դու հեզարար.  
 Մի ի (զուր) հոգօք մաշիլ  
 վասն անցաւոր կենաց համար.  
 Զի շատ ոք հաւանեցան  
 այս կենցաղոյս 'ւ առին դադար,  
 Իայց շուտով յատակ ծովու՝  
 ի խորս անցան որպէս կապար:

#### Տաղ սիրոյ

Հանց գեղեցիկ մորճ ու շիտակ  
 Պատկեր գեղով՝ առ յիս հասաւ.  
 Այլ չէ տեսեր մարդ կենդանի  
 Զերդ զայն՝ որ իմ աչքըս տեսաւ:

Զօրն ես ի յիւր սէրըն կենամ,  
 Յերակ հետ իւր տեսուն զընամ.  
 Զաչերս արեամբ հետ իւր թանամ  
 Զիրայ հոգիս յիանէ տարաւ:  
 Երբոր անուշ հոտն յիս բուրեց՝  
 Զիս ի խելաց շուտով թափեց.  
 Ի յայն պահուն սիրտս իմ եփեց,  
 Երբ իւր տեսն ինձ երեեցաւ:  
 Զերդ ըզլուսին սուրամթ բոլոր,  
 Շուրջ երեսին մագեր ոլոր.  
 Այնով արեր է շատ մոլոր,  
 Ոնցտի լուսով յիս ծաթեցաւ:  
 Թէ սիրտ ունիմ՝ սէր անվըճար,  
 Որ բաժնելոյ այլ չըկայ ճար.  
 Նսն իմ հոգոյս եզեր տաճար,  
 Իմ աչերուս լուս ծագեցաւ:  
 Ակն ու գոհար է իր շարած,  
 Ներքև շըրթանցըն պատրաստած.  
 Տեսն իւր կարմիր է զարդարած,  
 Զինչ բուրաստանք որ ծաղկեցաւ:  
 Զինչ որ հագնի նսն իւր վայլ է.  
 Երբ գունըզգուն ելնէ փայլէ,  
 Զերկիր ի հիւր լուսոյն հալէ,  
 Հանց որ շատոց սիրտ մաշեցաւ:  
 Ես եմ կարօտ ի յիւր սիրուն՝  
 Զինչ ծարաւած յերկիր ցօղոյն.  
 Կամ զինչ գարնան անուշ քամուն,  
 Թէ երբ հնչէ հողմըն հարաւ:  
 Քանի որ հիմ տեսնուս գատեր  
 կենաց ճարակն է ինձ հատեր.  
 Լացն ու հառաչն է զիս պատեր,  
 Հոգու քաղիլ ու սրբտացաւ:



Զնա երբ ի խաղ տեսնում նազով՝  
 Լուսին սուրբաթ սիահ մազով,  
 Ես ի յիւր դէմ ելնեմ սազով  
 Եւ թէ ծառայ լինիմ կամով:

Յայնժամ լինի այն մեզ նըշան  
 Երբոր խըմեն չընի շիշան.  
 Նըռան գինևով զգինին ոււշան  
 Որ քու տեսուտ նըմանեցաւ:

Քանի խօսիս բանք ի ժողով  
 է՛ Կոստանդին բարձրը բողով.  
 Կամ անցաւոր բանք սըղալով  
 Ընդ որ ի քէն հանց գովեցաւ:

Եղբարք մի կան հետ մեզ սիրով,  
 Աշխարհի բան ուզեն գըրով.  
 Նայ ես վասն այն յայտնի ձայնով՝  
 Սիրու բաներս ասցի յոլով:

Դարձիր յունայն սուտ բաներուտ,  
 Զի է անշահ և անօգուտ.  
 Խելօք իմաստութիւնը մուտ,  
 Զի քեզ բաժին իրք մ'այլ անկաւ:

### Տաղ սիրոյ ազնիւ

Այ սուրբաթ, պայծառ ու պատկեր լուսատես՝  
 Զիմ աչերս ի քո սիրուտ յէ՛ր կու գատես.  
 Դու գարնան քամի, ես ծաղիկ ծարաւած.  
 Իմ ծարաւ սըրտիս համար հողմը հընչեց:

Ի յերկրի ինչ կայ նըման քեզ օրինակ,  
 Դու յերկնից լուսեղէնքն ես նըմանակ.  
 Քու տեսովդ ես դու լուսին պատրի թամամ,  
 Որ իմ սըրտիս խաւարեալ լուս կու ծագես:

Դու սուլթան ես, պէհըսապ շատ ծառանով,  
 Զծառայիս ձայնըն գիտեմ որ կու կանչես.  
 Դու քանի՞ հեռացեալ ես այս քո գերուս,  
 Արտասուքն ի վայր թափես ի յաչերուս:

Թէ լինէր որ գըեզ տեսնի առ յիս գալով,  
 Եւ խընդութեամբ ի դէմ գայի քեզ սիրով.  
 Ի յերկրի երես դընի քեզ կոխելով,  
 Ու զհոգիս անդ հանէի յօժար կամով:

Ասեն՝ Եղուկըդ տար սիրով ջերմային  
 Երբոր դուն յորդորելով մանրաքայլես՝  
 Ասեն արև ծագեցաւ ի մէջ գիշերիս,  
 Երբ քայլես յանկարծակի յերկրին երես:

Ով ընկեր ի քո սիրուդ բանտ ի զընտան՝  
 Հաղէղէթ և անմահութեանդ է նա տես.  
 Ով որ ունի ի քո սիրուտ իրք մի նըշան,  
 Կենդանի մարդ հոգեւոր դու զնա գիտես:

Ով չունի սիրելի սիրով հետ քեզ վառ,  
 Դու անբան և անասուն ըզնա կոչես.  
 Դու յակապ քաղցր ու լատիֆ ես խօսելով  
 Որ շաքար ի քո շըրթանցըդ կու ծախես:

Բուրաստանք ծաղկով ի լի տես թէ վառես.  
 Որ ի յիս անմահութեան հոտ կու բուրես.  
 Դու ծաղկանց ես թագաւոր վարդի գունով,  
 Զիս ի քո դիմացդ ի փուշն յէ՛ր կու զատես:

Դու հուքմով փատիշահ ես քու եասիրով,  
 Եասիր կամ քո ծառայ զինքն ազատես.  
 Ես ազատ եղեալ եմ այսօր յերկրի վրայ,  
 Թէ ծառայ սըրտի կամով զիս տեսանես:

Այլ չըկայ քեզ Կոստանդին, կեանք մուրատով,  
 Երբ ի յիւր քաղցըր տեսուն հանց կարօտ ես.  
 է՛ սուրբաթ պայծառ ու պատկեր լուսատես,  
 Զիմ աչերս ի քո սիրուտ յէ՛ր կու գատես

Տաղ գարնան

Այսօր եղև պայծառ գարուն՝  
Հոտըն բուրեաց անուշ վարդուն՝  
Զայնըն քաղցըր գար պըլպուլու. Ա՛յ հայ  
եւ եղանակըն հաւերուն:

Ծաղկանց դաշտերըն գունըղգուն,  
Սըփոխն տերև(ք)ըն ծառերուն.  
Յորդորեցաւ ջուր գետերուն,  
Լողան ձրկունքն ի մէջ ծովուն:

Պըլպուլն նստաւ ի վրայ վարդին,  
Նա հարբեցաւ անուշ հոտուն.  
Առաւօտէ մինչ երիկուն՝  
Եղանակէր ի հեա վարդուն:

Տերև սըփոխն առաւօտուն,  
Յօղըն իջեալ ի վրայ ամպոյն.  
Նա ըղպըլպուլն ի մեր սիրուն՝  
Կամ քանց գալին ի մէջ ծովուն:

Զինարունուն ու նունուֆարն  
Նարկիդ ծաղիկըն խայտայգուն,  
Մուրա ու շուշանն ու բրաբիոն  
եւ ըռահէանն էր խիստ սիրուն:  
Հանց ողորմուկ ի վարդն ասաց,  
Թ՛առանց քեզ սնց ելնեմ ի հուն.  
Հանց քակեցիր շունչս ու հոգիս,  
Ա՛յլ չի մընաց երեսրս դուն:

Հանց ողորմուկ ի վարդն ասաց.  
Իմ լուսատու արևըն դու,  
Ասաղըն զոհալ և մուշտարին,  
Շամս ու դամար, իմ թաճըս դուն:  
Տըպապիոն կամ շափիւղայն,  
Ակըն սուտակ և շիկագոյն.

Դու ես քաղաք Չինուճաչին,  
Մարդիք ի քեզ յուշ կու մըտնուն:  
Եկայք մանկունք ի պաղչանին,  
Ծաղկունքն ի մէջ վըրան դարնեմք.  
Ղումբին երգէր մեզ եղանակ  
Այսօր եղև պայծառ գարուն:

Այսօր մարդիկ ուրախանան  
Որ տեղսնին ընկեր սիրուն.  
Նոքա ի սէր մեր ժողովին,  
Քաղցրիկ խըմեն անուշ գինին:

Տերև սըփոխն առաւօտուն,  
Կանաչ կարմիր և գունըղգուն.  
Թ՛ըռչնուկ ի յօղըս վերանան՝  
Օրհնեն զԱստուածն ամենեցուն...

*13 Լեւոն*

ՅՈՎՀԱՆՆԵՍ ԵՐԶԵԿԱՅԻ

Երբ՝ Պուզ *Դաւթայ արշալուս* *հաւցար*  
վարդապետի ասացեալ  
Երկուս ի մէկտեղ բերած,  
գերդ ընկեր կասեն թէ պահէ.

*Դաւթայ*

Ու չորս բընութիւնս օտար,  
հետ իրաց կասեն թէ սաղէ.  
Զայս չորս յիրար սնց պահեմ,  
ամեն մէկ յինքըն կու քարշէ.

Զիս հոգս ի յայտոց միջին,  
գերդ կըրակ ըղմոմ կու հալէ:  
Հողըս չոր խուշկիկ առնէ,  
Չուրըս գէճ կու ցրտացընէ,  
Քամին զիս յերերք ունի,  
կըրակին բոցըն կու վառէ:  
Հանցեղ սիրելի չարկամ

մէկտեղ ո՞վ իսկի տեսեր է:  
 Հոգիս թէ ի վեր քարշէ,  
 հողըս ծանր ի վայր կու հակէ:  
 Վախեմ թէ հողոյս լրսեմ,  
 նա հողոյս բանըն դըժարէ,  
 եւ հեա հողոյն ո՞վ թուչի,  
 երբ նորա տունըն հեռի է:  
 Հինգ դունն է ի բաց թողած,  
 թէ փակէ որ գող չի մտնէ,  
 Ըզգողս ես տանէս ունիմ  
 որ զդուներս ի բաց կու պահէ:  
 Շաղուած ես ի չորս իրաց,  
 այդ ցեղ շէնքդ ամուր չի լինի.  
 Օղըն հողուն ի՞նչ նըման,  
 հուրն ու ջուրն են խիստ ատելի.  
 Ի հակառակէ ստեղծած,  
 և եղած ես մարդ կենդանի.  
 Վերնայ օդն ու հուրն ու ջուրն,  
 և մարմինըդ դառնայ փոշի:

Աւանդ, մեզ հայիլ պիտի  
 յայն արևն որ լոյս կու ծագէ.  
 Շատ կայ ի յարև նըման,  
 ի պնչէն օձըն կու վազէ  
 Գիտուն մարդն յարև նըման  
 խօսքըն լուս պայծառ կու ծագէ.  
 'Է անգէտ մարդն օձուն նըման,  
 հանապաղ ըզմարդ կու խոցէ:  
 Մարդ կայ որ հազար արժէ,  
 հազար կայ որ մէկ մի չարժէ,  
 Ան մարդն որ հազար արժէ,  
 անգէտին մօտ փող մի չարժէ:

Բազան ի անտառ մորին,  
 թէպէտ բու թէպէտ բազա է.  
 Ճոհարն ի ծովուն միջին  
 թէպէտ քար թէպէտ ճոհար է.  
 Խելօքն ի յանգէտն ի մօտ  
 միտք արան թէ ի՞նչ նըման է.  
 Ճըրագն ի յառջև կուրին,  
 կու վառի 'ի ինքըն չի գիտէ:

Խելօքն է ի ծով նըման,  
 որ քանի չափես կու տանի,  
 Անգէտն է ի տիկ նըման,  
 փառչ էվէլ լընուս նա պատուի:

Աշխարհս ի տուլպա նըման  
 որ ի վեր 'Է ի վայր թաւալի,  
 Վերինըն ի վայր դառնայ  
 և վարինն վեր ոլորի.  
 Մըտիկ դու հիւսանն արան,  
 որ թապութ 'Է օրոցք շինէ նայ:  
 Մէկըն գայ և մէկն երթայ,  
 նայ իւր բան պակաս չի մընայ:

Աշխարհս է ոչինչ նըման,  
 շատ դատին դառնան փոշիման,  
 Հալալ ու հարամ այնեն  
 հոս թողուն 'Է ի հոն կու գընան,  
 Ջան արան գործէ բարի  
 որ յետոյ չլինիս փոշիման.  
 Թէ չէ Ադամայ զբախտէն  
 քեզ կանանչ տերև մի չի տան:

Աշխարհս է կանանչ մարգեր,  
 մենք ի մէջն ենք կաքուռ ձագեր,  
 Հրեշտակնին արծիւ դարձեր  
 կու տանին զմեզ մէկ մէկ ի վեր,  
 Մանկտիք, երբ ի հաց նըստիք,  
 ձէնէցէք աղքատք ձեզ ընկեր,  
 Մեռնիք 'ւ ի յանդէն երթայք,  
 կու նըստէք քանց մէկ մէկ մ'այլ ի վեր:

Ելայ ժողվեցի զիմ մեղքն  
 ու դըրի առջես ու լացի,  
 Յանդէնըն քարվան կերթար,  
 շալկեցի 'ւ ի հետ գընացի.  
 Հրեշտակն այլ ի դէմս ելաւ,  
 թ'ուր կերթաս ողորմ ու լալի,  
 Այդ շալկիդ որ դու ունիս,  
 անդէնին քեզ տեղ չի ընկնի:

Երնէկ ես նորա ասեմ  
 որ աշխարհս ի սուգ կուղենայ,  
 Զիւր մեղքն ի յիշումն ածէ  
 զօրն ի բուն նա նստի ու լայ.  
 Արտասուք սապոն լինի,  
 սեռութիւնքն ըսպիտականայ:  
 Թէ չէ օր հարսնիցըն գայ,  
 նա հանդերձ հարսին չուենայ:

Աշխարհս է ի ծով նըման,  
 ով որ գայ անթաց չիմընայ.  
 Յայս ծովս ես ի նաւ մըտայ.  
 գընաց նաւս և ես չիմացայ.

Եղեր մօտեցեր է նաւս,  
 վախեմ թէ քարի դիպենայ,  
 Բակտի իմ աղւոր շինւածս  
 ու տախտակըս մէկմէկանայ,  
 Երթամ աղաչեմ զԱստուած  
 որ հանէ դիհաց մի քամի,  
 Այս մըթանըս լոյս մի տայ,  
 զմեզ բարի երկիր մի տանի:

Մարդն որ օտար տեղ երթայ,  
 զատ մի խելք կու պիտի նորա.  
 Ամէն մարդոյ ցած կենայ,  
 ապա իւր բանըն լինենայ.  
 Մըտիկ դու ծառին արսւ,  
 որ քանի ճըղեր կայ ի նա.  
 Այն ճիւղն որ զպըտուղն ունի  
 քանց զդարտակն ի ցած կու կենայ:

Լաւ մարդ ես նորա ասեմ,  
 որ բանայ զբերանըն համով.  
 Հանցեղ լեզուս գին չունի,  
 զինչ լընուս տուն մի ճոհարով.  
 Աստուած երբ զաշխարհս արար,  
 զօրն ու զհուրն ու զհողըն ջըրով,  
 Մսխալ մ'աւելի չարար,  
 այլ կշոեց զամենըն չափով:

Շատ թագաւորաց մեծաց,  
 յիմաստնոց արանց լըսեցի,  
 Թ' այնչափ չըկշտանայ մարդն  
 աստնւորովս ինչ որ մեռանի.

Տանին գերեզման դրնեն  
 և հողով իւր աչքըն լեցւի.  
 Ապա փոշիմնայ 'ւ ասէ  
 Թէ հերիք է 'ւ այլ չի պիտի:

Մէկ մարդ մի ճուհար ունէր  
 'ւ ի խելաց շահել չը կարաց.  
 Զինչ խելքն ի վերայ եկաւ,  
 նայ գընաց ճուհարն ի ձեռաց.  
 Գընաց նա ի վայր նստաւ  
 ողորմիկ ու շատ մի իլաց,  
 Նորա լացն այլ ինչ շահէ,  
 երբ գընաց ճուհարն ի ձեռաց:

Դաւիթ արքային որդի Սողոմոն  
 գայս մեզ կու ասէ.  
 Զխրատ իմաստնոյն դու տուր,  
 աւելի նա ըզքեզ սիրէ.  
 Թէ անգէտ 'ւ անմիտ մարդոյն  
 խըրատ տաս նա ըզքեզ ատէ,  
 Ու թուր ու դանակ առնու,  
 Թէ կարէ նա ըզքեզ սպանէ:

Հողին հողվորքովն անցաւ  
 ու գմարմինն ի հողն անիծեց.  
 Թէ մեղքն ես դու արաք,  
 յանդէնն իմ երեսն տմաչեց.  
 Մարմինն ի հողուն ի դուրս  
 այսպէս խօսք զհողին վըճարեց,  
 Թ' ես հող էի հող դարձայ,  
 քո ամալն է ըզքեզ բռնեց:

է՛ գերվար մարդ ու տխմար,  
 յէ՛ր չես երթար ի միտք ի վայր.  
 Կորուսիր զազատ հոգիդ,  
 'ւ ադ հողեղէն մարմնոյդ համար.  
 Ի կեր'ւ ի խում ես հետ մեղաց,  
 ի ժուռ կուգաս զօրն անդադար.  
 Առնուս ու տաս մարմնոյդ ի կեր,  
 գիրացընես որդանց համար:

### Տ ա դ

Այս ինչ կրակ էր այրեց,  
 կամ ինչ խաւար, որ զիս պատեց.  
 Ես վէ՛մ անխաղտ էի խաղտեց,  
 Պողպատ ամուր, զէտ ջուր հալեց:

Եկաւ անցաւ ու ճոխք քայլեց.  
 Ճոճաց ու զմէջքն կոտորեց.  
 Դարձաւ ի յետ, խօլոր նայեց,  
 Զանձս տեսաւ ու զահընդեց:

Օրն շաբաթ լոյս կիրակի  
 Վերի վանացն ի վայր կուգի.  
 Բուրվառ ի ձեռս ու խունկն ի լի,  
 Սաղմոսարանս անթս ունէի:

Ղետ կու գայի, հետ կարդայի,  
 Երթամ հասնիմ ճաշու ժամի.  
 Եկի առի հանց կրակի,  
 Ոչ գրէի, ոչ կարդայի:

Մէկմ' է հեծեր պօզ պէտաւի.  
 Եկաւ անցաւ քաջ մուղալի.  
 Աչոր ունէր Թաւրէզ տալի,  
 Ընքվին զխելքս կու տանի:

Խնձոր ձգեց մտիկ չարի.  
Մէկ մ'այլ ձգեց, ցածցայ ու առի.

Սէն մուսուրման մօլլայ ղըղի,  
Պէն Յովհանէս քէշիշ օղլի,  
Խնձորդ ի յիս ինչ բան ունի:  
Յովանէսին մայրն է, աղւնյ,  
Հագեր վալա վրան ճուպայ,  
Վերի վաներացն ի շուրջ կուգայ  
Ու խունկ ու մոմ կուխոստանայ:

Հաբեղաներ, ասէք Մեղանյ,  
Սարկաւագներ, Տէր ողորմեա.  
Միթէ իւր խելքն ի վերան գայ,  
Թ'իմ Յովանէսն տուն ոսունայ:

Մէկ մի չասաց թէ Տէր մեղանյ,  
Ամէնն Ալլահ ու շէյտուլայ.  
Յետոյ գայս ճուղապն ասացին.  
Այլ Յովանէսին ճար չկայ:

Ծոյ Յովհանէս, ծոյ իմ աղւնյ.  
Դարձիր ի տունն, ասն Մեղանյ.  
Հոնկայ տէրտէրդ կուճորայ,  
Թէ Աշան ընկեր է ի հետ նորա:

Հայ իմ մարիկ, ես քեզ ծառայ.  
Թէ իմ տէրտէրն զիս ճորայ,  
Նա ես զԱշան ցցնեմ նորա,  
Քան զիս ունյլ խե կուլինայ:

Ծոյ Յովհանէս, ծոյ իմ աղւնյ.  
Դարձիր ի տունն, ասն Մեղանյ.

Դու մէկիկ ես, այլ ճար չկայ,  
Այլ լինալու ճարակ չկայ:

Հայ իմ մարիկ, ես քե ծառայ:  
Ձկաթդ, որ կերայ, հալալ արն.  
Ձխելքս առին ու խել եղայ,  
Յիսնէ ի քեզ այլ ճար չկայ:

Ծոյ Յովհանէս, ծոյ իմ աղւնյ,  
Դարձիր ի տունն, ասն Մեղանյ.  
Քեզի բերեմ Հայու զըս(տ)րիկ,  
Ձքեզ աւրհնել տամ քահանայ:

Հայ իմ մայրիկ, մի տխմարնար.  
Ձկայ նման գէմ Աշային,  
Լեզուն պիւլպիւլ, ձայնն զուճրի,  
Մէջքն բարակ գէտ ֆունկի:

Աշան նստեր էր փէնճէրէն.  
Ափն երեսին էր, խիստ կուլար.  
Թ'այսօր ծեծեց իմ հայր Ղատին,  
Թ'էր կուսիրես Հայուն որդին.  
Տես թէ կելնէ, մէկ մի կուգայ,  
Ականջն խոլ Յովհանէսին:

Խե Յովհանէսն, երբ գայն լսեց,  
Քոնեց զճամբան ի եղընկին,  
Գլխիբաց գտակն ափին,  
Գնաց կանգնեցաւ յառջև խանին:

Բարե երես թագաւորին.  
Նոքա շուտով զբարեն առին.  
Բունեց զպօղ ձիուն ազին,  
Կաֆայ ասաց ամեն ճարին:

Աշան կանգներ ի վերայ բերդին,  
Մտիկ կանէր Յովհաննէսին,  
Քոֆը է կանգներ դեղին հագնողն,  
Ինքն զկանանչն ու զծիրանին:

Ծոյ Յովաննէս մտիկ արն.  
Թ'ի վերայ բերդին թ'ինչ կուխաղայ.  
Դեղինվորին ես եմ ծառայ,  
Կանանչվորին զանունն ասն.  
Թէ չէ լինիմ շահին բաղայ,  
Թռնիմ նստիմ թեիդ վերայ.  
Պապուս անուն ասեմ մօլլայ,  
Աղբօրս ասեն քաղքի շահնայ,  
Եւ զիմ անունն ասեն Աշայ,  
Մէկալ քրոջս Դուզութայ,  
Իմ մօրս աննն ասեն Փաթմայ,  
Ու հօրս ասեն Դատի մօլլայ:

Խև Յովաննէսն է քո ծառայ,  
Շուտով տէրտիս տէրման արն,  
Թէ չէ խեցայ լեռներն ընկայ,  
Զէտ մոմ ի տեղս հալեցայ...

### ՖՐԻԿ

#### Գ ան գ ա տ

Աստուած արդար և յիբաւի,  
Եւ ողորմած յամենայնի,  
Հանդէս ունիմ բան մի վիճի,  
Թէ դու լսես քո ծառայի:

Այս է զարմանք հիանալի,  
Որ կու լինի վերայ երկրի:

Եւ հիացումն ազգի ազգի,  
Զոր տեսնեմք ի աշխարհի:  
Գէմ մէկ Ադամ էր ի դրախտին,  
Եւ մէկն Եւայ իւր նմանին,  
Եւ մէկ բարբառ համազգային,  
Մինչև կերեալ պտղոյ ծառին:

Արդ այս բանս է հիանալի,  
Եւ առաւել զարմանալի,  
Թէ մէկ Ադամ և յԵւայէ  
Ո՛րքան ազգեր ծնան յերկրի:  
Ուրիշ լեզու ամէն մէկի,  
Որ մէկ մէկի ոչ հաւանի:  
Որ մէկն է Հայ, մէկն Վրացի,  
Մէկն Տաճիկ, մէկն Ասորի:

Մէկն է ձըհուտ երբայցցի,  
Եւ մինն Արաբ Հագարացի.  
Մէկն է Ալան Արևորդի,  
Մինն է թովիչ և Ափխազի...

Որքան տանջեն զմեզ յաշխարհի,  
Եւ կեղեքեն զկեանս մեր յայտնի.  
Եւ դու ներես յամենայնի,  
Ու անտես առնես զմեզ ի վշտի:

Տէր, ոչ խնդրես վրէժ յայտնի,  
Եւ ոչ ցուցանես ակն ամենի.  
Գիտես՝ մարմին եմք մըսեղի,  
Գէմ արձան չեմք ինչ երկաթի:  
Եղէզն չեմք, կամ խոտ վայրի,  
Որ խանձ արկեալ ես կրակի,  
Քան զանդաստանս փըշաբերի,  
Կամ մացառաց ինչ պրակի:

Որ բարկացար Հայոց ազգի,  
Որպէս Հրէիցն Իսրայէլի,  
Զինչ բարկուեալն ի քէն թափի,  
Նա ի վերայ մեր գայ կուտի:

Արդ եթէ չենք ինչ պիտանի,  
Եւ կամ չունինք գործ ինչ բարի,  
Կամ քո սրտիդ եմք ատելի,  
Որ չարչարաք ըստ հրամանի,

Նա դու ջնջէ՛ զմեզ մէկ հետի,  
Որ քո բարի սիրտդ հանգչի,  
Թէ այս կամօքդ քո կու լինի,  
Ամենակալ Աստուած բարի:

Նա մեք տանեմք սրչափ պիտի,  
Եւ համբերեմք ամենայնի.  
Այլ որ վատուծն է թող կորի.  
Եւ էոր կամիս թող այն լինի:

Այս ամենայն թող գայ անցնի  
Զոր ասացի վասն իմ ազգի.  
Եւ այս էր բան քո հրամանի,  
Արդար իրաւ դատաւորի:

Որ մէկն ասլրի տասն տարի,  
Մէկն հարիւր այլ աւելի.  
Մէկն ոչ ի տասն հասանի,  
Երկու երեք ամսոց մեռնի:

Մէկինն մէկ որդի լինի,  
Անօր անժամ նա մեռանի.  
Մէկն այլ ունի շատ մի որդի,  
Անտի ոչ մազ մի չպակասի...

Մէկն ի պապանց պարոնորդի,  
Մէկն ի հարանց մուրող լինի.

Մէկին հազար ձի և ջորի,  
Մէկին ոչ ուլ մի, ոչ մաքի:

Մէկին հազար ղեկան ոսկի,  
Մէկին ոչ փող մի պղղընձի.

Մէկին հազար հատ մարգարտի,  
Մէկին ոչ ունիկ մի ապիկի:

Մէկին հազար գառնով մաքի,  
Մէկին ոչ մէկ չորքոտանի.

Մէկին բեհեզ և ծիրանի,  
Մէկին բրդէ շալ մի չանկնի:

Մէկին առլաս և զըրմզի,  
Մէկին շապիկ մի չի հասնի.

Մէկին հարամըն յաջողի,  
Մէկին հալալըն կորուսի:

Մէկն ի զրկանացն հարըստի,  
Մէկն յիւրայնոցն աղքատացի.

Մէկն է ուժով զարմանալի,  
Մէկն է վախկոտ սարսափելի...

Զտօլվաթն ասն թէ ուր լինի,  
Եւ բաղդաւորն ուր գտանի.

Որ ի շուրջ գամ տասն տարի,  
Եթէ կաթիլ մ'իսնձ հանդիպի:

Զի թէ թագուր է ի թախթի,  
Կամ քահանայ է խմբի.

Եւ կամ իշխան է արքունի,  
Կամ որդի մեծ թագաւորի,

Եւ նա տօլվաթ և բաղդ չունի,  
Եւ ոչ շնորհ խօսից կարգի,

Նա թող հեղեղն զնա տանի,  
Քարէ կարկուտն այլ աւելի:



Ամբաղղն գայ ամօթալի,  
 Հեզ և հանդարտ առաքինի,  
 Գայ և կանգնի յետին տեղի,  
 Անշուք անշնորք և անյարգի.

Բաղդաւորն գայ ճօճկտալի,  
 Գայ և նստի յաւագ բարձի.  
 Լուծն ի փորին ի շուրջ անցնի,  
 Եւ ալելու մի չի դիպնի...

Մէկն է ձեռք աննմանի,  
 Հասեալ ուսման և արհեստի,  
 Հիմն արկանէ յատակք ծովի.  
 Կամուրջ կապէ վերայ գետի.

Մէկն կերպիւ է տնազելի,  
 Է ախտերես և աղտեղի.  
 Մէկի ձեռուին է գերզ գողի,  
 Որ ոչ կարէ կուրդուել ջորի:

Մէկն է խիստ սև որպէս Հընդի,  
 Պոկօշ, զազիր և գարշելի.  
 Մէկն է չաղար կապոտ աչուի,  
 Կարճահասակ և փանաքի:

Մէկն է ճընչող և անճոռնի,  
 Կոպիտ, փալիտ, երկայն աքուի.  
 Մէկն նըման է հրեշտակի,  
 Եւ շատ ունի նա գործ բարի:

Մէկն նըման է Յուդայի,  
 Սպանող, դամագ, գործօղ չարի,  
 Տեղի եղեալ սատանայի,  
 Եւ բնակարան դիւաց դասի:

Ես քեզ մեղայ երկնաւորի,  
 Տեառն Աստուծոյ անեղ մեծի.  
 Քո դատաստանն է յիրաւի,  
 Նեաթով կուտաս ամեն մէկ:

Տէր, քո կամացն է աշխարհս լի  
 Այսպէս լինել զոր ասացի.  
 Քեզ օրհնութիւն ի մէնջ տացի,  
 Ամենազօր Տեառնդ Յիսուսի:

Տ ա ղ

(Մի կտոր)

Միրտ իմ, ընդէ՞ր ես խոովեր,  
 Աչք իմ, ընդէ՞ր ես խաւարեր:  
 Խելք իմ, ընդէ՞ր ես ճապաղել,  
 Միտք իմ, ընդէ՞ր ես շիւարեր:  
 Է՞ր չես դմահու օրն անդիճել,  
 Ի հրեշտակի գալուն վախել.  
 Զհողուոյ քանդիլն յէ՞ր չես յիշել,  
 Յաստուծոյ յերեսս հեռացել:

Զիր պատուիրանն ես մոռացել,  
 Իիմաց հողուոյդ ես քարացեր,  
 Տուն և տաճար ես դուն շինել,  
 Գանձ ու դումաշ ես ժողովեր.

Վերայ գլխոյդ մոխիր մաղել:  
 Իսկի տեսել չէս, կամ լսել  
 Ինչ մեծատուն մարդ ի մեռել,  
 Ըսկի դեկան հետ չի տարել:

Ինքն է ժողովել, ինքն է կերել,  
 Հաց մի չիշխեաց յիւրմէն ուտել.  
 Զայս ո՞ւմ կամիս դու մեղադրել,  
 Խնդիր են հէնց զքեզ տանել:

Դասք հրեշտակաց են սրտմտեր,  
 Զսառնամանիքն են պատրաստել.  
 Ըղտարտարոսն են քեզ պահել,  
 Անքուն որդունքն են կտակել,

Կան ու մնան զքեզ բերել,

Ձիւրեանց ժանիքն են խիստ սրել:

Միս և յարիւնդ են ծարաւել:

Սաւարն թանձր է պալ կապել,

Հուրն նորա միջին վառել:

Մեղաւորացն է պատրաստել,

Դառն և դժվար եմ զնա լսել:

Ձինչ կարգացել ես ու լսել:

Ձինչ նախահարքն են վկայել,

Ձայն չի կամիս ըսկի լըսել,

Թէ յիմ ճակատն էր զայս գրեր:

Ո՞վ է իսկի զԱստուած խաբել,

Կամ պատճառաւ զհոգին թափել:

Մի՛ մոլորել ու զքեզ խաբել,

Մի՛ ըզհոգիդ կորուսանել:

Յանանց լուսոյ զքեզ մի՛ զրկել,

Մեղքն ու զչարիքն մի՛ գործել:

Մի՛ սուտ խօսել և գոք զրկել,

Թէ չես շնացել իամ գողացել:

Կամ վկայել, և սպանանել,

Եւ բերանովդ երդում կերել:

Թէ զպատուիրանն չես յանցել

Ի տանջանացն դու մի՛ վախել:

Ձինչ դոր այլոց ես կամեցել,

Գո առաջին կամքն բերել:

Փրիկ, դու յէր ես յիմարել,

Ձհողւոյն աչքերդ ես կապուցել:

Սրտի տկանջդ ես դու կարել,

Ձխելքդ, զգայարանք ես դու վարել

Այս սուտ կենօքս ես զբաղել,

Ի մէջ մեղաց ես դադարել...

## ՄԿՐՏԻՉ ՆԱՂԱՇ

Ունայն ու թիւն աշխարհիս

Երազ է սուտ, եղբարք,

աշխարհիս բաներն ի լման.

Ո՞ւր են թագաւորք; իշխանք,

պարոնայք և սուլթան ու խան.

Շինեցին բերդ ու քաղաք,

դարպասնի, ու շատացան,

Յետոյ գէմ անտէր թողին,

ու մտան ի հող լ' ի զնտան:

Նաղաշ, մի՛ խաբիր մեղօք,

մի՛ դատիր անասնոյ նման.

Մի՛ զիրկ աշխարհիս ածեր,

մի՛ կարծեր, թէ քեզ տի մնան.

Շուտով քեզ խնդիր կուզան,

ու խոցեն զհոգիդ մահուան.

Հոգիդ բաժանի ի քէն,

ու մնայ մարմինդ ի զնտան:

Աշխարհս գէմ պաֆա չունի,

ու չար է մարդ ու բարի,

Օրիկ մի՛ խնդալ կուտա,

բայց յետոյ է դառն ու լեղի.

Աշխարհիս մի՛ հաւատար,

զօրն ի բուն գէմ սուտ կուխօսի,

Ձինչ որ խոստանայ մարդուն,

չի պահել զիր խօսքն ի տեղի:

Շատոց խոստանայ հանգիստ,

ու պահէ զօրն յերերմանի.

Շատոց մեծութիւն ասաց,

ու պահէ աղքատ լ' անօթի.

Սարէ թէ ուրախ պահեմ,  
 ու առնեմ զօրերդ ի բարի:  
 Ի վերջոյ ծովուն տանի,  
 ու պահէ ի տարտարոսի:

Առուքք մի վերայ անցնի,  
 լուկ մահուն օրն հասանի,  
 Յարևուն դատարկ հանէ  
 և առնէ ողորմ ու լալի:

Աւանդ զայն աղւոր մանկտիքն,  
 որ դարձան ի հող ւ՛ ի փոշի:

Իւրեանց ժամանակն անցաւ  
 զերզ զերազ մութն գիշերի:

Երբ զայդ գիտէիր, գերի,  
 որ քո սէրդ ի սուգ տի փոխի,

Զաշխարհս դու մի սիրեր  
 առաւել քան զկարն աւելի:

Մալի հասրատ մի լինիր,  
 մեծութիւնն քեզ չի պիտի:

Ունիս կերակուր, հանդերձ,  
 աւելին քեզ ցաւ կու լինի:

Է՛ ողորմելի Նազնշ,  
 դու ջանս ու գործէ բարի:

Զքո զխրատն դու լսէ,  
 որ այլոց ի գործ անցնի:

Գիտի, թէ լողորդ էի,  
 նա մեղաց գեան կու տանի,

Ի հոգս աշխարհիս դատի,  
 շահ չունի քան զենն աւելի:

Վասն ազահու թեան

Զինչ թագաւորք և մեծ իշխան,  
 որ հեծելով յիրար կռուան,

Զինչ որ արիւն յերկիր հեզան,  
 ամեն վասն ազահու թեան:

Զինչ որ քաղաք ասպալեցան  
 և ժողովուրդք որ գերեցան,

Զինչ որ աւերք առեթախտան,  
 ամեն վասն ազահու թեան:

Հարք ի յորդոց բաժանեցան,  
 բուն սիրելիքն քակտեցան,

Բազումք եղեն եղբայրասպան,  
 ամենն վասն ազահու թեան:

Կաթուղիկոսքն շատացան  
 անօրինացն՝ բռնութեան,

Եպիսկոպոս օրհնեն անբան,  
 ամենն ազահու թեան:

Վարդապետերս որ նոր ելան,  
 բանին եղեն վաճառական,

Եւ քարոզեն զհաճոյս մարդկան,  
 ամեն վասն ազահու թեան:

Հարեղանին զվանքն ուրացան,  
 և ի գիւղօրայքն ի շուրջ կուզան,

Սաղմոս ասելն մոռացան,  
 ամեն վասն ազահու թեան:

Երիցաներն յիրար կռուան,  
 բիր վերուցին և գաւաղան:

Փետեն մորուս, կոտրեն բերան,  
 ամեն վասն ազահու թեան:

Գերի Նազնշ ողորմելի,  
 ի քեզ նայեաց դու յարածամ:

Զինչ որ այլոց քարոզեցիր,  
ամեն ի քեզ կայ ի լրմանս.

Մի համարիր զազգն մարդկան  
քան զքեզ ելեալ ամբարտաւանս.

Զինչ որ յաշխարհս կայ մեծութիւն,  
զամենն ի քեզ կամիս միայն.

Վարդապետ կերպարանիս,  
եպիսկոպոս գերաստիճանս,

Ունիս շնորհս զանազանս,  
նա զեռ զու չես այդոր հաւանս.

Աղուոր զմիտքդ ժողովէ,  
որ այդկից այլ չեղնես ունայնս,

Զնաւդ ի բեռանց թեթեացոս,  
որ հասանիս ի յօթեանս:

Գ ա բ բ ի էլ և Մ ա ր ի ա մ

Բլբուլն ի վարդն ասաց. Խիստ անողորմ ես,

Որ զիմ արիւն քեզ խալալ կու զնես,

Որ հանց պէկուման զու Գաբրիէլն ես,

Նա արեկ ան զհոգիս, քանի՞ տի տանջես:

Վարդն բլբուլին ասաց. Զիս յէր կու խոցես,

Դու զիմ հոգին առեր, հետ քեզ կու գրես,

Հասրաթ կայ յիմ սրտիս, անշէջ կու վառի,

Որ զքեզ արժան գտայ ու թէզ կորուսի:

Բլբուլն ի վարդն ասաց. Հոգիս կու քաղուի,

Ու բաժանել ի քէն ինձ մահ կու թուի.

Քո շատ կարօտուդ սիրտս կու լափի:

Որ թէ շաքար տան, ինձ զահր ու լեղի:

Վարդն ի բլբուլն ասաց. Այս ի՞նչ կունան է,

Զինչ զու խեղ ինձ արիր: կատարեալ մահ է.

Հանցեղ հուքմ ու հրաման քեզ ո՞վ տւել է,

Որ վարդն ի քո ձեռացդ զարի ու զար է:

Բլբուլն ի վարդն ասաց. Դու արիր ինչ չար.

Զար ու ֆրդան կանչեմ յալամս հաւասար.

Իմ սիրտս հասրաթով հետ քեզ կուղողար,

Դու ոչ մրվաթ ունիս և ոչ զինահար:

Վարդն բլբուլին ասաց. Հաղար զինէհար,

Դու մի լինիր յիսնէ շուտով բէզար.

Ահն ես քեզ ֆրդէ իմ թաճ ու զար,

Քարամ արն քարամ է անշէն աղար:

Բլբուլն ի վարդն ասաց, թէ անման ես.

Զկարէ մարդ հողեղէն լեզուով զովել զքեզ.

Քան զտապարզի շաքար քաղցր ու շիրին ես,

Որպէս մուշկ ու ամբար անուշահոտ ես:

Վարդ բլբուլին ասաց թէ արեւն զուն ես,

Որ ի բոլոր ալամս լուսով կուծագես,

Յով որ քաղցրիկ նայես և նաղար առնես,

Այլ հասրաթ չի մնար, ով տեսնէ զքեզ:

Բլբուլն ի վարդն ասաց. Է՛ պարի լուսին,

Զկայ քեզ օրինակ ջուհար մեծագին,

Քո մէկ հայելդ արժէ զքաղաքն Մաշին,

Զէ Զինուամաշին մէկ հայելուդ զին:

Վարդն ի բլբուլն ասաց. Հասրաթով սրտին

Ինձ ալմաս բոլոր չէ քո տեսուդ զին.

Յայնժամ հասանէ վարդն իւր մուրատին,

Երբ տեսանէ զբլբուլն ի մէջ տերեւին:

Բլբուլն ի վարդն ասաց. Հոգիս քեզ ֆրդէ,

Սիրով մէկ ծիծաղիր, որ արև ծագէ.

Լաթիֆ շրթանցդ շարժին հանցեղ շիրին է,

Որ թէ զհոգիս ուզես, սիրտս յօժար է:

Վարդն ի բլբուլն ասաց. Ինչ սիսաթ է,

Որ ալմաս բոլոր քո դէմ հասրաթ է.

Երկիրս ամեն ի քո կրակն ինկեր է,  
 Ծատոց սիրտս ես լափեր, որ ասելոյ չէ:  
 Բլբուլն ի վարդն ասաց. Դու չես հողածին.  
 Դու ես բահրի նիտար, լատիֆ ու նարին.  
 Է՛ շահ սալլի աւան նագուր ու շիրին,  
 Թող դու անփորձ մնաս քան զնշդարենին:  
 Վարդն ի բլբուլն ասաց. Ի՞նչ ադաթ կայ քեզ  
 Որ յանկարծակի սիրտս կու խոցես.  
 Հազար հետ ամանաթ ու երգում տամ քեզ,  
 Զոր ինչ հետ ինձ արիր, այլ մարդոյ չանես:  
 Բլբուլն ի վարդն ասաց. Ես խիստ ուրախ եմ,  
 Դու մանշուր յալամիս, ես քեզ ինայեմ.  
 Ցորժամ հեռանաս, նա զօրն ի մահ եմ,  
 Որ թէ զիս մոռանաս, յանկից կու վախեմ:  
 Վարդն ի բլբուլն ասաց. Է՛ լութֆ ու քարամ,  
 Որ առանց քո տեսուդ իմ կեանքս է հարամ,  
 Զաղուր զձայնդ երբ լսեմ և ուրախանամ,  
 Դառնայ էլած հոգիս և կենդանանամ:  
 Նրդաշն ասաց թէ վարդն խիստ աղէկ է.  
 Օրս կորստական և անցաւոր է.  
 Թէ հանց մ՞ որ միտք ունիս և խելքդ ի բաց է,  
 Դու զայն վարդն սիրէ, որ դեղ կենաց է:  
 Քանզի սէր աշխարհիս աւուրք մի քաղցր է.  
 Յետ բաժակ մահու և դժոխոց է.  
 Զի մահ կայ և մեռանիլ, յետինն լաց է,  
 Եւ սարսափ դժոխոցն զիս կու մաշէ:

## Տ ա ղ

Զինչ որ գեղեցիկ ծաղկունք  
 կային, ամենք գնացին.  
 Ծաղիկ մին այլ հանց գնաց,  
 որ ամեն ծաղկունք զնա լացին,

Ծաղիկն անուշ հոտ ունէր  
 որ ամեն աշխարհս լսեցին,  
 Ու ամեն աշխարհաց ծաղկունք  
 յայն ծաղկի սէրն դիմեցին:  
 Ոմանք յայն ծաղկի սիրուն  
 չորցան ու դարձան դեղին,  
 Բագումք յայնք ծաղկի սիրուն  
 ծաղկեցան քան զնշդարենին:  
 Զայն ծաղիկն Աստուած երեւ,  
 նա ոմանք զղատրն չիմացին.  
 Ծաղիկն ով երեւ էառ զիւրն,  
 շատ ոք ի վայր մնացին:  
 Ծաղիկն յանց տեղ գնաց,  
 որ ամեն ծաղկունք խնդացին.  
 Հազար գոյնգոյն ծաղկունք  
 յայն ծաղկի սէրն ժողովին:  
 Ծաղկունքն յայն ծաղկի սիրուն  
 շաղ առին ու շողողային.  
 Ամեն ծաղիկն իւր գունոջն  
 այն ծաղիկն գլուխ զնէին...

## Վ ա ս ն զ ա Ր Ի Բ Ի

Հոգի մի ասեր զարիբ,  
 թէ չէ իմ սիրտս կարունի.  
 Ղարիպն ի երկիր գէմ  
 խիստ դիժար կուլինի.  
 Զինչ հաւքն երամէն ի զատ  
 մոլորած ի տեղ չի հանգչի,  
 Այնչափ երերուն կենայ  
 մինչ որ իւր երամն հասնի:

Ղարիպ, սիրտդ մի նեղեր,  
 այս դիժար օրերս անցնի.  
 Շատ զարիպ ի տուն զարձաւ,  
 մի վախեր թէ քեզ չի լինի.  
 ԶԱստուած ողորմած կասեն,  
 ողորմի ամէն զարիպի,  
 Քեզ այլ օգնական լինի,  
 որ հասնիս սիրտդ մուրատի:  
 Հոգի, ամ դու լաւ կասես,  
 սիրտս է սե քան զգործելի.  
 Ի զարիպութեան զարտէն  
 երեսիս գոյնն կուքաղի.  
 Յորժամ ես ի միտ ածեմ  
 զիմ եղբարք և զիմ սիրելիքն,  
 Հոգիս բերանիս կառնու, կուքակտի,  
 ճարակ մի չունիմ:  
 Ղարիպ, զուսայ մի աներ,  
 զուսայէն մարդ ի՞նչ կուշահի.  
 Շատ մանուկ զուսայ կանէ,  
 ի շահին տեղն կուզենի.  
 Ղուսան շատոց շատ ցաւ բերէ,  
 ի ցաւէն էն մարդն մեռանի.  
 Զինչ սիրուն ի հասրէթ ունի,  
 ամենն մահրում կու լինի.  
 Աւանդ զղարիպն ասեմ,  
 որ յօտար երկիր հանդիպի,  
 Աչերն արտասուք ի լի,  
 յերեսէն ի վայր կուժափի.  
 Յորժամ ի մէջլիս նստի,  
 յանկակած սրտիզն արունի,  
 Զաչերն ի բոլորն ածէ,  
 կարևոր և զոք նա չունի:

Ամէնքս եմք զարիպ, եղբարք,  
 հայրենի մարդ իսկի չունի.  
 Հաւասար զնալու եմք,  
 զի այն կեանքն է մեզ հայրենի.  
 Աստենս քեզ ճարակ արն,  
 որ յանտէնն հոգիդ չը տանջի,  
 Զսուրբքն ի քեզ եղբայր շինէ,  
 ու զհրեշտակք արն սիրելի:

Վասն զարիպի

Ղարիպին կեանքն է լալի ողբերգական,  
 Դառն ու լեղի լի տրտմութեամբ ի նեղ զընդան.  
 Յորժամ լինի յօտար երկիր թափառական,  
 Ղարիպն օտար ոչ ճանաչեն և՛ ոչ գիտենան.  
 Անդ ոչ եղբայր ոչ սիրելի և՛ ոչ ազգական,  
 Ոչ գտանէ զոք կարևոր ասպնջական,  
 Որ թէ լինի պարոնորդի և աննման,  
 Հանած վարած ասեն նմա մոլորական:  
 Ղարիպի հացն է լեղի, որ ճաշակէ,  
 Դառն ու լեղի խառն արտասուօք ջուրն որ ըմպէ.  
 Թէ զօրն տան նուշ ու շէքէր, որ ճաշակէ,  
 Երբ հառաչէ, նա ի սրտէն արիւն կաթէ:  
 Ղարիպին սիրտն է ի սուգ անմխիթար,  
 Երբ հառաչէ, նա սիրտն ի փորն առնու գալար.  
 Յորժամ յիշէ զիւրն սիրելիքն հաւասար,  
 Նա յաչերուն արիւն կաթէ երեսն ի վայր:  
 Ղարիպին խելքն է կորեր, միտքն է մոլար.  
 Եւ թէ լինի քան զՍողոմոն մտօք ճարտար,  
 Որ թէ խօսէ բան մի քանի անգին ճոհար,  
 Մաստեն նմա թէ լուռ կացիր, անգէտ յիմար:

Ղարիպին ցերեկն եղճակ, գիշերն է վայ,  
 Աչերունն քունն է հասեր ու ճար չկայ,  
 Մտօք տանջի գիշերն ի բուն, ոչ դուրանայ,  
 Վաղիւն ես ինչ լինիմ գերիս, երբ լուսանայ:  
 Ղարիպին վայն է եկեր, երբ քաղցենայր,  
 Երես ի քաշ ի փողոցերն կու մուրար,  
 Շատոք փակէր զգունն ի դիմաց, նստէր ու լայր,  
 Թէ կաթ մի ջուր ուզէր գերին, մէկ մի չտայր:  
 Ղարիպին աղքատութիւնն է խիստ գիժար,  
 Յամեն դիմաց էր նեղացած, ու ճար չկայր,  
 Ղարիւն օտար էր ու պանդուխտ յերկիր օտար,  
 Թէկ է ի փոխ ուզէր գերին, մէկ մի չտայր:  
 Ղարիպն ի տուն երթայր մտնէր վախժախելով:  
 Ի տան տիրուն զինչ ի շանէն խիստ վախելով,  
 Յորժամ տեսնունն ի դուրս հրեն անարգելով,  
 Եւ նա ի յետ դառնայր արտում արտասուելով:  
 Շատոց սեղան լինէր դրած հազար բարով,  
 Եւ գայր զարիպն մտնէր ամաչելով,  
 Նա հազար գէշ ասեն նմա անարգելով,  
 Ապա թէ տան կտոր մի հաց տրանջելով:  
 Ղարիպն խեղճ էր, նա երբ յանկարծ հիւանդանայր,  
 Յօտար փողոց մոխրաթաւալ անկեալ կենայր,  
 Թէպէտ ունէր շատ սիրելիք, մէկ մի չկայր,  
 Եւ կայր անկեալ վրայ երեսին խեղճուկ, ու լայր:  
 Ղարիպն լայր և հառաչէր, ինչ լինենամ,  
 Աւնդ չգիտեն իմ սիրելիքն ինչ հալի կամ,  
 Ղարիպ օտար եմ ու պանդուխտ, դառն կուլամ,  
 Մէկ մի չունիմ ինձ սիրելի և՛ ոչ բարեկամ:  
 Ղարիպն անկեալ և թաւալէր ողորմագին,  
 Քանզի հասեալ է օր մահու բունն ատենին,  
 Ոչ բարձ գլխոյն կար զարիպին, ոչ անկողին,  
 Մալն սնարք է, և աւազ իւրն անկողին:

Ղարիպն առնոյր զտարն ու ձգէր հողեվարին,  
 Զգէր զբազուկն, ու տարածէր, քակտէր զհողին,  
 Հայէր խղճուկ յաջ և ի ձախ ողորմագին,  
 Մէկ մի չկայր, որ կաթ մի ջուր տայր զարիպին:  
 Ղարիպն ի ժամ հողեվարին երէց ձայներ,  
 Մէկ մի չիկայր, որ զպատաղանքն կատարէր,  
 Ոչ սիրելի և ոչ բարեամ առ նա լինէր,  
 Նա ի խոցոյն դառն արտասուէր և հասչէր:  
 Ղարիպին տէրն է Աստուած, նմա լսէր,  
 Ողորմութիւն քահանային սիրտն ծագէր,  
 Եւ նա եկեալ վասն Աստուծոյ զնա հաղորդէր:  
 Զղարիպ հողին հաղորդութեան արժան առնէր:  
 Ղարիպին եկեալ եհաս օրն մահուան,  
 Իսկն հեծէր, և արտասուօք զհողին եհան,  
 Եւ կայր անկեալ մէջ փողոցին անտիրական,  
 Մէկ մի չեկաւ տես զարիպին և ոչ լալական:  
 Տես թէ զինչ դառն է մահ ու կեանքն զարիպին,  
 Մէկ մի չկայր զձեռն խաչէր ի վերայ սրտին,  
 Ծիծաղելով առին տարան յեզեր հողին,  
 Մէկ մի չեկաւ անդ ի թաղումն զարիպին:  
 Նաղաշն ասաց թէ զարիպին կեանքն է հարամ,  
 Զղարիպին հալն գիտեմ, օր վայ կու տամ,  
 Թէպէտ տեսայ զամեն մարդոց լուծֆ ու քարամ,  
 Զղարիպութիւնն յորժամ յիշեմ քան զուռ զողամ:  
 Նաղաշն ասաց թէ զարիպին սիրտն է քնքուշ,  
 Քաղցրն լեղի թուի նմա զինչ վարդն փուշ,  
 Զենեհնար հետ զարիպին զրուցէ անուշ,  
 Ողորմութիւն տուր ու քաւէ զմեղացն փուշ:

## ՅՈՎՀԱՆՆԷՍ ԹԼԿՈՒՐԱՆՑԻ

## Գ ա Ր Ո Ւ Ն

Գէնայ բահար, այլ՛ւի բահար.  
 Այլ՛ւի կուտան սիրոյ խաբար.  
 Ծով ծով աչևեր ու լուս քնար.  
 Ունքն կէս էր քան զկամար,  
 Ճակատդ է լուս և լուսքնար,  
 Բոլոր լուսին, շամս ու դամար.  
 Վարսերդ ոսկի թելէ քաշած,  
 Վերայ մարմնոյդ եկեալ հաւար:  
 Երեսդ ի վառ է ծիրանի,  
 Վարդ, ուէհան ու նունուֆար.  
 Ծոցդ է բաղչայ վարդով ի լի.  
 Մարգարիտ ատմունքդ ի շարէ շար,  
 Քո ձայնդ անուշ քաղցր եղանակ  
 Բերնէդ ի վայր թափուի ջուհար.  
 Այդ քո պատկերդ է լուսեղէն,  
 Այլ արեգակն լուս չի տար.  
 Մարմինդ քո ձոխ բուսեր չինար.  
 Ու ճօշ կուտայ քան զուռ դալար.  
 Այդ անյատակ ծովուդ նման  
 Գերիս ի մէջն դարդ արար.  
 Հանցեղ նետով զիս խոցեցիր,  
 Որ այլ չունիմ բժշկարար.  
 Է գեղեցիկ կերպիւ սուրաթ,  
 Որ է ստեղծուած նաշխ ու նիգար:  
 Նշտարենի ծառ ես ծաղկնալ.  
 Պտուղ կուտաս մուշկ ու ամպար.  
 Բեհեզ հագեր ես ծիրանի,  
 Ծալքերդ ամէն մարգարտաշար.

Քաղաք Խաթայ Չինու-մաչին  
 Ու Բուրսայու բերած պաշար.  
 Այդ ճանապարհդ, որ կու քայլես,  
 Բուսեր շուշան ու նունուֆար:  
 Կարմունջ կապեալ ես ապիկի  
 Եւ գետ գինի ուրախարար.  
 Ով որ խմէ ի քեզանէ,  
 Ուրախանայ սրտով յօժար:  
 Շրթունքդ շող է լուսեղէն,  
 Պըռնկնէդ ի վայր թափի ճուհար.  
 Ով որ մեղաց ճաշակն առնու,  
 Այլ Աստուծոյ չի տար խաբար:  
 Սէր զԱդամ դրախտէն հանեց.  
 Յերկիր ձգեց, արար շիւար.  
 Եւ զնա մատնեաց սատանայի  
 Որ չարչարեաց ամ վեց հազար.  
 Սէթայ որդիքն խառնակեցան,  
 Որ ճգնաւորքն էին յօժար.  
 Զփող և ճնծղեակն լսեցին,  
 Ամէնք եկին լեռնէն ի վայր:  
 Կինն զՅովաննէսն գլխատեց  
 Հերովդիայ պղծոյն համար,  
 Որ վառեալ էր ցանկութեամբ,  
 Փուրթով տարաւ զկամքն ի կատար:  
 Սէրն հանէ մարդն ի խելաց.  
 Որ այլ ըսկի չկայ խաբար.  
 Իմաստութիւնն խափանի  
 Եւ հանց դառնայ քան զգիւհար:



## Տ ա ղ ս ի ր ո յ

Ասի՛ սիրէ՛ զիս, ծով աչեր.  
Նա ասաց՝ պահեմ զաչս ի վերան.  
Նիստ, որ հայիմ՝ յերեսդ ի վայր,  
Հերիք կացիր, ինձ յերևան:

Թէ շատ թէ քիչ ի յետ ձգեմ.

Միթէ անցնի հուրս ի խափան.

Նա սէր ի սիրտս ի ներս կերթայ,

Ես կուսնամ մեղաց միայն:

Բերեմ մեղաց զահն ի մտիս.

Ու զդժոխոց հուրն անվախճան.

Միթէ ազատ եմ այս կրակէս,

Որ անվախճան ինձ վառեցան:

Խե Յովհաննէս Թուղուրանցի,

Սրտի մտօք զականջդ բնց.

Ու աստէն արն քեզ ձար շուտով,

Որով անդէն առնուս պակ:

## Տ ա ղ գ ա Ր ն ա ն

Ահն եղև պայծառ գարուն.

Ծաղկեալ այգիքն ու պողչանին,

Դաշտք ու լերինք զարդարեցան,

Յարօտ հանին զխիլանին:

Գունդքն ծաղկին ու հետ կապին,

Անուշանայ հոփն ու քամին:

Ձաղերն ձայն ատեն յայգին,

Քաղցր կուգայ ձայն պիւլպիւլին:

Կութանձրանայ շուքն ծառին.

Յորդոր գնայ ջուրն ի յառջին,

Ձթեն բերէր բոլոր վզին,  
Սիրով խմէր զանուշ գինին:  
Այն վարդենուն գէմ չկայ գին,  
Որ այն խնդումն հանդիպին,  
Քաւել զբախտն անմահութեան,  
Յորում եղաւ մարդն առաջին:  
Թէ չէր մահուն օրն ու դժոխքն  
Ու կամ սարսափ զատաստանին,  
Նա այս աղէկ էր զինչ ասաց  
Խե Յովհաննէս Թուղուրանցին:

## Վ ա ս ն ս ու տ ս ի ր ե լ ե ա ց

Իմ սիրտ, լսէ ու ականջ արն,

Որ սիրելի խակի չկայ.

Ոչ զբացին և ոչ եղբայր,

Ոչ միակեց, ոչ քահանայ:

Այս ժամանակս հանց երբ.

Ով որ չգիտէ՛ թնո՞ գիտենայ.

Ձով որ գիտես խիստ սիրելի,

Հուրն ի բերնէն ի դուրս կուգայ:

Թէպէտ շինես շատ սիրելի,

Մի հաւատար սրտովդ ի նա.

Ամէն զեհաց փորձէ՛ և տես,

Ապա զխորհուրդ ասան նորա:

Շատ մարդ յերեսդ է քաղցրախօս.

Ի սիրտն հուր կու բորբոքայ.

Սեղնի լինի սուտ սիրելի,

Ի փորձութեանց ժամն ուրանայ:

Քանի ողջ ես, զքեզ պահէ,

Գլուխ լ'անձդ պէտ արայ.

Եթէ հաքիմ կարի լինիս,  
 Կեանքդ քան զճով անցնի լ'երերայ:  
 Ի հետ անգէտ սուտ սիրելուն  
 Ով երկու խօսք առնու և տայ,  
 Նա ականջովն հանց քան լսէ,  
 Որ միտ զնէ և զարմանայ:  
 Յիշխանաց քաջ և զինաւորն  
 Յերակ որ տեղն տրտում կենայ,  
 Գայ մօտ ի քեզ հրեշտակ,  
 Ելնէ գնայ քան զսատանայ:  
 Դու պահէ զսէրն կանգուն,  
 Սիրտդ սիրով թո՛ղ լինենայ,  
 Ատելութեան տեղիք մի տար,  
 Որ բարութիւն երթայ մնայ:  
 Խե Յովհաննէս Թուրքուրանցի,  
 Ազուոր պահէ զմիտք ի վերայ.  
 Մարգասէրն է Աստուածասէր.  
 Եղբայրատեացն է սատանայ:

Ի վերայ մահուան

Քանի դատիս ի հետ մեղաց,  
 Է՛ անզգամ մարդ կատաղած.  
 Զայնչափ չարիք, որ գործեցիր,  
 Հերիք արն, դարձիր մեղաց:  
 Ի յԱդամայ մինչև այսօր  
 Շունչ կենդանի զոք չէ թողած.  
 Գիտեմ չսես խրատու գրոց,  
 Մեղաւորաց թ'ինչ կայ պահած:  
 Ով որ ունի բերդ ու քաղաք,  
 Դարբաս ունի ոսկւով ձեփած:

ԳՐԱԴԱՐԱՆ  
 ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԼՏ. ՊԱՏԱՍԿԱՆ  
 ԲԱՆԻԱԲԱՆ

ԱԿԱՆ  
 ՏԵՏՐ

Հարցոցի զատ

Российский  
574  
50-

4039

Ф - 31